№ 17 ԿԻՐԱԿԻ, 25 ՅՈՒՆՎԱՐԻ

1915
ՔԱՌԱՍՈՒՆՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ԽՄԲԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԿԻՐԱԿԻ, 25 ՅՈՒՆՎԱՐԻ № 17

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 րուբլի. ամսական 85 կոպ.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Соломоновская ул., № 21.

Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տելեֆոն № 2—53

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզվով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20—10 կոպ.

Տպարանի տելեֆոն № 67.

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՈՆ
Երկուշաբթի, յունվարի 26-ին,
ՀԱՅՈՑ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԸՆԿ. ԽՈՒՄԲԸ
ՏԻԿ. ՄԱՅՍՈՒՐԵԱՆԻ
ԲԵՆԵՖԻՍԻՆ
Կը ներկայացնէ
Առաջին անգամ հայ բեմի վրա
ՓՈԹՈՐԻԿ
Դրամա 5 արար. Ա. Օստրովսկիի, Թարգմ. Վերգ. Մանուէլեանի։
Մասնակցում է ամբողջ խումբը։
Սկիզբը երեկոյեան ժամը ճիշդ 8-ին։
Ռեժիսսեօր՝ ՍԵԽՈՒՄԵԱՆ
Վարչութեան հերթապահ անդամներ՝ Գ. Ցուրինեան Ս. Ղազարեան
տռ. (ա. օ.) 47. 2—2

ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ
Կովկասեան Հայոց Բարեգ. Ընկ. հիմնում է կար ու ձևի, գուլպայագործութեան և կօշկակարութեան
ԺԱՄԱՆԱԿԱՒՈՐ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ,
ուր ընդունվում են 14—20 տարեկան աղջիկներ։
Դիմել Ընկերութեան գրասենեակը Ул. Паскевича, № 13, առաւ. ժամը 10—1-ը։
Ընդունելութիւնը մինչև փետրվարի 1-ը։ —◆— Պարապմունքները փետրվարի 3-ից։
Նոյն տեղն ընդունվում են փախստականների համար նուէրներ՝ գլխաւորապէս հագուստեղէն վերոյիշեալ աղջիկների համար։
տռ. (ե.) 48. 2—1

ՀԱՅ ՕՐԻՈՐԴՆԵՐԻ ԿՈՄԻՏԷՆ
ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆՈՒՄ
ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՎՆԱՍՎԱԾՆԵՐԻ ՕԳՏԻՆ
Երեքշաբթի, յունվարի 27-ին, կը կազմակերպէ
ԵՐԵԿՈՅԹ
1. Օրհասական դէբիւտ, Թարգմ. Ի. Ալիխանեանի։ 2. Денщикъ подвелъ. 3. ՋԱՒԷՇՏ. բուֆէտ, մանուշակների վաճառք,
Բարեհաճ մասնակցութեամբ տ. տ. Մայսուրեանի, Ստարոստինայի, Սեւումեանի և օր. Սեմեօվայի, պ. պ. Ալիխանեանի, Բարիսօվի, Վրոյրի, Ա. Նազարբէկեանի, Մուրադեանի, Պոլինսկիի, Ռատովի, Ռաղոլինի և ուրիշների։
Սկիզբը ժամը 7½-ին երեկոյեան։
Տեղերի գները 1 րուբլուց մինչև 3 րուբլի, ուսանողական՝ 50 կ.։
Տոմսակները վաճառվում են կոմիտէի գրասենեակում՝ Гановская ул. № 18. իսկ երեկոյթի օրը Ժողովարանում ժամը 6-ից։
տռ. 50. 1—1

ԿՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԵՒ ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ
ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Ռտիշչևսկայա 13, տէլէֆօն 4—21.
Ընդունելութիւն թէ կանանց և թէ ներքին, նոյնպէս և վիրաբուժութեան կարիք ունեցող մնայուն (стаціонаръ) հիւանդների (բացի վարակիչ և հոգեկան հիւանդութիւններից) վաղօրօք գրվելու պայմանով։
Ընդունելութիւն՝ կանանց հիւանդ. ամեն օր՝ ժ. 11—12 առ.։
Հիւանդանոցի բժիշկները
Ա. Ա. Յարութիւնեան
Ն. Ն. Վեսելովզորով
Վ. Ա. Զակրժեվսկի
Ի. Գ. Կալամկարեան
Ա. Ա. Նովիցկիյ
Գ. Ն. Տէր-Ներսէսեան
Ա. Ր. Փիշէր
Ս. Պ. Շահպարոնեանց
(ե կ.) առ 970. 100—23

ԲԺՇԿԱՊԵՏ
Մ. Յ. ՄՈՒՐԱԴԵԱՆ
Նախկին օրդինատ. Մոսկվայի համալսարանի և ասիստենտ Բեռլինի համալսարանի պրօֆ. Պօզների։
Ընդունում է հիւանդներին միզասեռական, սիֆիլիսի և կաշուի հիւանդութիւններով, առ. ժ. 10—12, երեկ. ժ. 4—6։ Սօլօլակ՝ Ռտիշչևսկայա փող. սեփ. տուն, № 1, հրդեհաշէջների բնակատեղիի դիմացը, տէլէֆօն 10—58.
(չ. ու. կ.) առ. 875. 70—52

ԲԺ. Գ. ՄԱՂԱՔԵԱՆ
վերադարձաւ: Հիւանդների ընդունելութիւնը ժամը 5—7 երեկոյեան։
Բէբուտովսկայա № 38, հեռախօս 3—88.
առ. (ա. օ.) 49. 5—3

ԲԺԻՇԿ
Շուշանիկ Նարաբեան
(Մասնագէտ կանանց հիւանդութիւնների և մանկաբարձութեան)։
Ընդունում է հիւանդներին՝ (առ. ժ. 12½—2. (եր. ժ. 4—6.
Հասցէն՝ Սօլօլակ, Ռտիշչևսկայա փ. № 1.
Հեռախօս 10—58.
(ե.հ.կ.) առ. 784. 100—58

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Ս. Գ. ԿԷՕՆՃԵԱՆ
պլօմբ, արհեստական ատամներ, ատամի հեռացումը առանց ցաւի։
Ընդունելութիւնը ամենայն օր.
Առաւ. 10—2 ժ.
Երեկ. 4—7 ժ.
Կիրակի օրերը 10—12.
Լերմոնտովսկայա փողոց № 1. մուտքը նրբափողոցից։
առ. (հ.կ.) 804. 0—81

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

—o—

ՊԱՏԵՐԱԶՄ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԴԷՄ

—o—

ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

23 յունվ.

ԹԻՖԼԻՍ.—Պաշտօնական։ Կովկասեան զօրաբանակի շտաբի կողմից.

Յունվարի 22-ին զօրաճակատում խոշոր փոփոխութիւն չեղաւ։

ԱՆԳԼՕ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

23 յունվարի

ԿԱՀԻՐԷ.—Չորեքշաբթի օրը արշալոյսին թիւրքերը նորից փորձեցին անցնել Սուէզի ջրանցքը Տօսսումի մօտ, բայց ստիպված էին նահանջել ցերեկվայ ժամը 3-ի մօտերը, կորցնելով 6 օֆիցեր, մեծ թւով զինուոր սպանված և 282 գերի։ Անգլիացիք կորցրին 2 օֆիցեր և 13 զինուոր սպանված, 58 վիրաւորված։

Թշնամին յարձակում գործեց անգլիացիների վրա Պանատուրի մօտ, բայց ցիրուցան արվեց, թողնելով կուի դաշտում 21 սպանված և 25 վիրաւոր։

Թիւրքերի թիւն է 12,000 մարդ 6 հրետանիով։

ԼՕՆԴՕՆ.—Կահիրէից հաղորդում են յունվարի 22-ին, որ երէկվանից, երբ թշնամին փորձեց անցնել Սուէզի ջրանցքը, կռիւը չէ դադարում։ Թիւրքերը նոր յարձակում գործեցին։ Այսօր առաւօտ լսելի էր ուժեղ թնդանօթաձգութեան ձայն։ Թշնամին խրամատներ է փորում և շարունակ ստանում է ռազմամթերք։

Լուրերի համաձայն, թիւրքաց զօրքերի մէջ գտնվում է գեներալ ֆօն-Կրէսսէնշտէյնը։

Պնդում են, որ թիւրքերի պատերազմասայլերը դժուարութիւնների են հանդիպում ուղտերի կոտորվելու պատճառով։

Կահիրէ են բերված 250 գերի, որոնց թւումն են 9 օֆիցեր. գերիները հագնված են շատ վատ և նմանվում են մուրացիկների։

ԿԱՀԻՐԷ.—Պաշտօնական հաղորդագրութիւն. «12,000 թիւրքեր 6 հրետանիներով վաղ առաւօտ մի շարք վճռական յարձակումներ գործեցին Իսմայիլ Կանտարա-Տուսսում-Սէրապէումայի մօտ՝ Սուէզի ջրանցքը շարժական կամուրջների օգնութեամբ անցնելու նպատակով։ Ճակատամարտը տևեց մինչև ժ. 3-ը կէսօրվայ, որից յետոյ թշնամին նահանջեց անգլիական զօրքերի և նաւատորմի շատ խիստ կրակի տակ, ձգելով բազմաթիւ սպանվածներ և վիրաւորներ ու թողնելով 318 զինուոր և 8 օֆիցեր գերի, որոնց բերին Կահիրէ։ Անգլիացիք կորցրին 16 սպանված, որոնց թւում վիրաւոր 2 օֆիցեր, վիրաւորված 82 զինուոր և 10 նաւաստի «Հարտինգ» յածանաւից։

ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

(Պետ. Հեռ. Գործ.)

23 յունվարի

ԹԷՀՐԱՆ.—Ախվազում թիւրքեր առ այժմ չը կան։ Նաւթահորերը պաշտպանելու համար ուղարկված են անգլիական երկու ռազմանաւ՝ զօրքով։

(Լրագիրներից)

◆ «Б. В.»-ն հաղորդում է. «Թաւրիզում վերականգնվում է հեռագրական հաղորդակցութիւնը։ Քիւրդերից պարսկական գիւղերում խլված է մեծ քանակութեամբ զէնք»։

◆ Պրինց Օլդէնբուրգսկիի նախագահութեամբ կայացաւ խորհրդակցութիւն Կենտրոնական Ռուսաստանի նահանգապետների մասնակցութեամբ։ Քննվեց նահանգին թւով թիւրք գերիներին բաժանելու հարցը։

◆ «Թանինը» խորհուրդ է տալիս թիւրք կառավարութեանը դաշն կնքել Պարսկաստանի և Աւղանիստանի հետ։ Մանաւանդ նշանակութիւն է տրվում Աւղանիստանի զօրքին, որի օգնութեամբ կարելի է յաղթական արշաւանք գործել դէպի Հնդկաստան։

◆ Կ. Պոլսում շատ մահափորձեր են կատարվում գերմանական և թիւրքական գեներալների կեանքի դէմ։

◆ Կ. Պոլսում լուր է տարածված, թէ Էնվէր-փաշան կալանաւորել է արտաքին գործերի նախկին մինիստր Թալէաթ-բէյին։

◆ Մայրաքաղաքի թերթերին հեռագրում են, որ Դամասկոսի ազգաբնակութիւնը արտաքսված է։ Քաղաքը ամրացվում է։ Էնվէր-փաշան վերադարձել է բանակ։ «Գեբէն» յածանաւի փորձնական նաւարկութիւնը անցել է անաջող։ Թիւրքական կառավարիչ շրջաններում յուսահատութիւն է թագաւորում յաղթութեան նկատմամբ։

ԻԹԹԻՀԱԴԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ ԵՒ ԿՈՐԾԱՆՎԱԾ

(Սեփական թղթակցից)

II

Մարանդ, 18 յունվարի

Քիւրդերը և պարսկական երիտասարդթուրքերը ինչպէս հիւպատոս Նասի, նոյնպէս Փառավազ-խանի, հիւպատոսական գործակալ միրզա Ունան-խանի և սպասաւորների գլուխները դիակներից պոկելով անցկացրին նիզակներին և ամսիս 20-ին յաղթանակով մտան Մարաղա։

Թէ որքան էր թիւրքերի թիւը Սօուջ-Բուլաղում, որքան քիւրդ միացաւ նրանց, որոշ յայտնի չէ. միայն տարածված լուրերը առասպելական էին, 50—100,000-ից էին խօսում։ Սակայն Միանդուաբի վրա արշաւած ձիաւոր քիւրդերի թիւը 10,000-ից աւելի է համարվում, իսկ թիւրքական զօրքը 2—3000 հոգի։

Մարաղա դեռ չը հասած՝ Միանդուաբի և Մարաղայի քրիստոնեայ ժողովուրդը հեռացել էր դէպի Թաւրիզ և Ջուլֆա, որպէսզի քիւրդ հրոսակների ճանկը չընկնէ։ Իսկ երբ մեր հիւպատոսն ու հպատակները Թաւրիզից դուրս եկան, թիւրքերը սիրտ արին քիւրդերի հետ մտնել Թաւրիզ դեկտ. 25-ին, որպէսզի Էնվէր-փաշայի հրամանը կատարած լինեն։

Դեռ Միանդուաբ չը հասած՝ թիւրքերն ու քիւրդերը լսել էին Սարիղամիշի և Օլթիի տակ օսմ. բանակի ջարդի լուրը։ Յայտնի բան է, այս լուրին չը հաւատացին և նորից մարդ ուղարկեցին ստուգելու. ուղարկվածը թէև դրական պատասխաններ բերեց, բայց քրիստոնեաների գաղթը Ուրմիայից և Սալմաստից, ռուսների՝ Թաւրիզից հեռանալը, սահմանը անցած զօրքի ներս կոչելը շուարեցրեց թիւրքերին, որոնք այս պարագաներից խրախուսված՝ առաջ շարժվեցին և մտան Մարաղա ու Թաւրիզ։

Բայց կարճէք փշի վրա էին նստած թէ թիւրքերը և թէ մանաւանդ քիւրդերը, քանի որ սարսափը տիրել էր ընդհանուրին։ Էնվէրի բանակը փշրվել էր, ինքն էլ փախել, էլ ով պիտի առաջնորդէր թիւրքերին Թիֆլիս—Բագու։ Մինչ այս՝ ռուսական դիպլօմատիան էր առաջարկն արեց պարսկական կաբինէտին և կարեւոր կարգադրութիւնները կատարելուց յետոյ՝ ամսիս 11-ին մեր զօրքը անցաւ Ջուլֆայից Արաքսը։ Ամսիս 13-ին Մարանդի մօտից Եամը անցաւ՝ ճանապարհին և Շօր-Դարայում պատահած թշնամին չարաչար փշրելով։ Ամսիս 15-ին Սօֆիանում մի փառաւոր յաղթանակով քիւրդ ձիաւորներին և զօրքը ջարդելուց և պաշտպաններին էլ դէպի Մարաղա փախցնելուց յետոյ, մեր զօրամասը ամսիս 16-ին անցաւ Ալվար գիւղը, փշրեց Իթթիհադին յարած պարսից երիտասարդներին և 17-ին կէսօրից մի ժամ անցած յաղթանակով մտաւ Թաւրիզ։ Մեր զօրքերին ընդառաջել էին ամբողջ քաղաքի ազգաբնակութեան առաջնորդներն ու լիազօրները։

Սօֆիանում վեր առան մեր պանծալի զօրքերը թիւրքերի լեռնային թնդանօթներից 4 հատ, որոնք արդէն Ջուլֆայից շուտով կուղարկվեն Թիֆլիս։ Թաւրիզի լուրջ ազգաբնակութիւնը ազատվեց քիւրդական կոշմարից և պարսկական երիտ.-թուրքերի ցնորական յաղթանակներից։

Այսպէս՝ Էնվէր-փաշայի Թաւրիզի ասպանտիւրան էլ փառաւոր խայտառակութեամբ վերջացաւ և Իթթիհադը զգաց, որ շրէշով չի կարելի սիւննի և շիա ժողովուրդները իրար կապել և փուչ փչելով խաբել թշուառ ազգաբնակութեան։

Օսմ. և գերման հիւպատոսները Թաւրիզից փախել էին, որպէսզի չընկնեն ռուսական իշխանութեան ձեռքը։ Թէև դեկտ. 25-ին օսմ. զօրքը պարսկական երիտասարդութեան և քիւրդերի հետ մտաւ Թաւրիզ, ուր կղերն ստիպված էր ընդառաջելու, որպէսզի քաղաքը չը կողոպտեն և ոճրագործութիւններ չը կատարեն, բայց օսմ. և գերմ. հիւպատոսները չը համարձակվեցին Թաւրիզ մտնել մինչև յունվ. 17-ը։

Երբ արդէն մեր զօրքը փառաւորապէս առաջ էր գնում և պատրաստվում Թաւրիզ մտնելու, Թաւրիզ հասան օսմ. և գերման. հիւպատոսները և այդտեղ մնացին միայն հինգ ժամ։ Նրանք հասել էին Թաւրիզի օսմ. ասկեարին օգնելու, քիւրդ և թիւրք պարսկ. երիտասարդութեան ոգեւորելու, որպէսզի կարողանան մեր քաջարի զօրքի առաջ դուրս բերել, այն ինչ ամենից առաջ փախաւ գերմ. հիւպատոս Շունմանը։

Պէտք է յայտնել, որ Իրանի շահը մի ֆերման էր տուել, որ՝ ով որ միանայ օսմ. բանակին, նրան հրաւէր կարդայ դէպի Պարսկաստան, ընդառաջէ ու օգնէ, նրան սպանել և ամբողջ գոյքը տիրած գիւղերի հետ յարքունիս գրաւել։ Այս պատճառով քիւրդ ցեղապետները սաստիկ զգուշանում էին և հոգեկան տանջանքի էին մատնված։ Էնվէր-փաշայի՝ Սարիղամիշում և Օլթիում կրած պարտութիւնը յուսահատեցրել էր քիւրդական աշիրէթ յափշտակիչներին, որոնք առանց գրաւած գիւղերի՝ ապրելու հնարաւորութիւնից զրկված են։

Այս պատճառով՝ եթէ Միանդուաբ եկել էին 10—15,000 ձիաւոր, Մարաղա մտնելիս նրանց մի քառորդը հետ էր փախել դէպի Քիւրդստան։ Իսկ Թաւրիզ մտնելիս նոյնպէս մի քառորդը անհետացել էր, մնացել էին Ել-Խանիի հաւատարիմները և Ղալի-Ֆաթթահի երկրագործները, որոնք կռւում էին համոզված և մեծ եռանդով։ Բայց այդ եռանդն էլ չօգնեց։

Աորպետ

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

—o—

ՌՈՒՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ՌՈՒՍ-ԱՒՍՏՐԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

23 յունվարի

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Պաշտօնական։ Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

Բզուրի և Ռավկայի վրա ճակատամարտը յունվ. 21-ին շարունակվեց նախկին ուժեղ թափով։ Մեր զօրքերը, դիմելով յարձակման, անցան Բզուր գետը՝ նրա գետաբերանի մօտ, և գրաւեցին թշնամու դիրքերի մի մասը։

Դախօվի մօտ մենք վանեցինք գերմանացիներին։

Բօրժիմօվի, Գումինի և Վօլի-Շիդլովսկիի մօտ մեր և հակառակորդի յարձակումները շարունակվեցին յաջորդաբար թնդանօթային անընդհատ կրակի պաշտպանութեամբ։

Վիսլայի ձախ ափի միացած զօրաճակատում, Սկերնևիցա-Վարշավա երկաթուղուց դէպի հարաւ միայն թնդանօթային կրակ է։

Նիդայի վրա, Ժէրնիկա գիւղի մօտ թշնամու կառուցած կամուրջը մենք պայթեցրինք։ Հակառակորդը փորձեց մասնակի յարձակման Նիդայի վրա, Բէմբօվի և Դունայցի մօտ, բայց մենք վանեցինք նրան։

Կարպատներում Ուժօկի, ուղղութեամբ, մեր զօրքերը շարունակում են առաջանալ։ Այստեղ մենք վերցրել ենք 3000-ի չափ գերի։ Ուժօկից դէպի հարաւ-արևելք մենք դիմադրում ենք թշնամու չափազանց մեծաքանակ ուժերի գրոհը։

Բզուրի և Ռավկայի վերջին կռիւների ժամանակ թշնամին կամենում էր կուի հանել զրահապատ աւտոմոբիլներ, բայց մեր թնդանօթաձիգ վաշտերի արթուն հսկողութիւնը արգելք եղաւ իրագործել այդ։

Մեր հետախոյզ խմբերը աջողութեամբ գործում են Ռավկայի շրջանում։

Դունայցում աւստրիացիք փորձեցին մօտենալ մեր ամրութեան Ժարնօ շրջանում, բայց ենթարկվեցին յարձակման և ցիրուցան եղան։

Մեր հակայարձակումների ժամանակ մենք ձեռք ենք ձգել բաւական գնդացիրներ։

Բօրժիմօվի մօտ մի փոքր դիրքում մենք թաղեցինք 300 գերմանացուց դիակ։

ՖՐԱՆՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ԱՆԳԼՕ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

23 յունվարի

ՓԱՐԻԶ.—Յունվարի 22-ի երեկոյեան պաշտօնական հաղորդագրութիւնը յայտնում է.

Բէլգիայում, Արասի հիւսիսային մասում տեղի էին ունենում թնդանօթային կռիւներ։ Լիլից-Արրաս մենք գրաւեցինք թշնամու դիրքերից 300 մետր։ Ալբէրից դէպի հիւսիս թնդանօթների կրակը մեծ կորուստ պատճառեց թշնամուն, ինչպէս նաև Օրէն հովտում լռութեան դատապարտեցինք թշնամու հրետանիներին, պայթեցրինք ռազմանիւթերը և աէրօպլաններին փախուստի դարձրինք։ Վէրդէնի մօտ մենք գերմանացի օդագնացին գերեցինք։ Էլզասում գերմանացիների յարձակումը ետ մղվեց։

ՓԱՐԻԶ. — Հաւասի գործակալութիւնը յայտնում է. «Լիսից դէպի հիւսիս տեղի ունեցաւ թնդանօթային կռիւներ, որոնք լարված բնոյթ ստացան Նիպօրի շրջանում։ Գերմանացիք յունվ. 21-ի առաւօտը յարձակում գործեցին Նոտրդամ-դէ-Լօրէթի վրա, բայց յարձակումը ետ մղվեց։ Ալբէրի և Կէնուաէն-Սանդէ շրջանում մենք ոչնչացրինք մի քանի պատուար։ Էն գետի շրջանում տեղի է ունենում թնդանօթային կռիւ ի նպաստ մեզ։ Վէվրում, Սէյլ հովտում մենք ունեցանք աջող գործունէութիւն։

Եղանակը տաքանում է։

Հաւասի գործակալութիւնը հաղորդում է, որ գերմանացի օդագնացները եռանդուն գործունէութիւն ցոյց տուին Բէլգիայում։

ԱՒՍՏՐՕ-ՍԵՐԲԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

23 յունվարի

ՑԵՏԻՆԻԷ.— Աւստրիացի մի օդաչու 2 ռումբ նետեց կառավարական շինութեան կողքի տան վրա, բայց վնաս չը պատճառեց։

ՀԱՄԱԵՒՐՈՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

(Պետ. Հեռ. Գործ.)

23 յունվարի

ՊԱՐԻԶ.—Հռոմից տեղեկացնում են, որ պապը մասնաւոր ունկնդրութեան ընդունեց իշխան Իւսուպովին։

ԿՈՊԷՆՀԱԳԷՆ.—Աւստրօ-ունգար կառավարութիւնը հրատարակել է Կարմիր Գիրք, որ պարունակում է 69 վաւերագիր, ընդգրկող 1914 թ. յուլիսի 16-ից առ 1-ն օգոստ. ժամանակամիջոցը։

ԿՈՊԷՆՀԱԳԷՆ.—Բեռլինից պաշտօնապէս հաղորդվում է, որ Մեծ-Բրիտանիայի և Իրլանդիայի և շուրջը եղած բովանդակ ջրային տարածութիւնը, Պա-դը-Կալէով հանդերձ, յայտարարված է ռազմական գործողութիւնների շրջանի մէջ։ Փետրվարի 5-ից այդ տարածութեան մէջ երևան հանված թշնամու ամեն առևտրանաւ կոչնչացվի, որի ժամանակ, հարկաւ, կը զոհվեն նաև նաւաստիներն ու ճանապարհորդները։ Չէզոք տէրութիւնների նաւերը յիշեալ ջրերում նոյնպէս կը վտանգվեն, նկատի առնելով անգլիական կառավարութեան՝ յունվ. 18-ին հրատարակած գաղտնի կարգադրութիւնը, որով անգլիական բոլոր առևտրականներին պատուիրագրվում է բարձրացնել չէզոք դրօշակներ և հեռացնել նաւարկու ընկերութիւնների անուններն ու նշանները, նաև ազգային դրօշակները։ Սկսած Շօտլանդական կղզիներից, նաև Հոլլանդիայի ափերով, ծովային 30 մղոն շրջանում նաւարկութիւնը համարվում է ապահով։

ՊԱՐԻԶ.—Օգնութ Բէլգիայի դրօշակների օրը հանգանակվեց 3.309,000 ֆրանկ։

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Թագաւոր Կայսրը բարեհաճեց Նորին Կայսերական Մեծութեան Բարձրագոյն հովանաւորութեան տակ ընդունել համառուսական ազգային միութեան ստեղծած սանիտարական-անդական խմբերը։

ՄՕՍԿՎԱ.—Քաղաքային դուման 100,000 րուբլի յատկացրեց կովկասեան փախստականների օգտին։

ԼՕՆԴՕՆ.— Լորդ Րօզբէրրիի որդի Նէյլ Պրիմրօզը նշանակվեց արտաքին գործերի ստատս-սէկրէտարի օգնական։

Համայնքների պալատ։ Պատասխանելով ուղղված հարցերին, Գրէյն ասաց, որ մեծբրիտանական կառավարութիւնը առաջուց տեղեկութիւններ չունէր, թէ Աւստրիան մտադիր է պատերազմ յայտարարել Սերբիային։ Դեռ 1913 թւին այդ մասին առաջին տեղեկութիւնը ստացվեց Հռոմի դեսպանից, որ իր ժամանակին իրազեկ արաւ Ջիօլիտտիի՝ պարլամենտում արած յայտարարութիւնների մասին։ Աւստրիայի վճռի մասին առաջին տեղեկութիւնն ստացաւ անգլիական կառավարութիւնը 1914 թ. յուլիսի 11-ին։ «Այն հանգամանքը,—ասաց Գրէյը,—որ Աւստրիան դեռ 1913 թ. մտադիր էր պատերազմ սկսել Սերբիայի դէմ, ապացուցանում է, որ Ֆրանց-Ֆէրդինանդի սպանութիւնը 1914 թ. բնաւ պատերազմը սկսելու պատճառ չէր»։

ՏՕԿԻՕ.—Մամուլը խիստ դատապարտում է, որ Իւանշիկայը ձգձգում է համաձայնել Եապօնիայի պահանջներին, և նախազգուշացնում է, որ եթէ չինացիք հետևեն Գերմանիայի կամ այլ տէրութեան խորհուրդներին ու յետաձգեն բանակցութիւնները, այն ժամանակ գուցէ միջադէպ ծագէ Եապօնիայի և Չինաստանի միջև։

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Սենատի առաջին դեպարտամենտում քննվեց այն գործը, որ վերաբերում է 1914 թ. սեպտեմբերին Բագուի նահանգի 20 արքունի նաւթաբեր հողամասերի կապալով տալու համար տեղի ունեցած աճուրդը հաստատելուն։ Սենատորների մեծ մասը դէմ էր հաստատման, իսկ եթէ առևտրի մինիստրը համակարծիք չը լինի իրանց, այն դէպքում գործը յանձնել սենատի առաջին ընդհանուր ժողովի քննութեան։

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹԻՒՆ

(Պետ. Հեռ. Գործ.)

23 յունվարի

ՊԱՐԻԶ.—Հաւասի գործակալութիւնը հաղորդում է.

«Ռուսաց, անգլիական և ֆրանսիական ֆինանսների մինիստրները եկել են Պարիզ պատերազմի հետ կապված ֆինանսական հարցերի քննութեան համար։ Նրանք միաբերան յայտնում են, որ Ռուսաստանը, Ֆրանսիան և Անգլիան հաստատապէս վճռել են միացնել իրանց ֆինանսական աղբիւրները այնպէս, ինչպէս միացված են նրանց զինուորական ոյժերը, որպէսզի շարունակեն ռազմական գործողութիւնները մինչև վերջնական յաղթութիւնը։ Այդ նպատակով նրանք վճռել են առաջարկել իրանց կառավարութիւններին յանձն առնել հաւասար բաժին այն փոխառութիւնների, որոնք տրվել են կամ ապագայում պէտք է տրվեն այն պետութիւններին, որոնք կռւում են այժմ միասին և կամ որոնք կը միանան յետագայում դաշնակիցներին յանուն ընդհանուր գործի։ Այդ փոխառութիւնների գումարը կը ծածկվի մասամբ դաշնակից մեծ պետութիւնների սեփական միջոցներով, մասամբ պատշաճ րօպէին բոլոր երեք մեծ պետութիւնների անունից փոխառութիւն բաց թողնելով։

«Ապա մինիստրների խորհրդակցութիւնը ընդունեց մի շարք անհրաժեշտ միջոցներ, որպէսզի Ռուսաստանի արտահանութիւնը հեշտանայ և կանոնաւորվի մաքսային գործը Ռուսաստանի և դաշնակից պետութիւնների միջև։

«Մինիստրները վճռեցին այսուհետև հարկաւոր եղած դէպքում գումարվել խորհրդակցութեան։ Հետևեալ խորհրդակցութիւնը կայանալու է Լօնդօնում»։

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

◆ Պարիզից տեղեկացնում են, որ Գերմանիան աւստրիական նոր պրեմիէր Բուրիանի պահանջով խոստացել է ուղարկել զօրքեր Աւստրիա։

◆ Թօյլատրվեց բաւարարութիւն տալ Կրասնօեարի բանտի մի խումբ բանտարկեալների միջնորդութեանը և ուղարկել նրանց պատերազմի դաշտը։

◆ Բօլգարական մինիստր Գէննադիևը յայտնել է, որ Սերբիան, ստանալով Բօսնիան և Հերցէգովինան, Խօրվատիան և Դալմացիան, կը վերադարձնէ Մակեդօնիան Բօլգարիային։

◆ Պարիզից հաղորդում են, որ Գերմանիան աշխատում է կռւեցնել Սպանիայի քաղաքական կուսակցութիւններին իրար հետ։

◆ Րուզվէլտը իր ճառում շեշտել է, որ Միացեալ-Պետութիւնները յանուն Հաագայի կօնֆերենցիայի որոշումների պաշտպանութեան՝ պէտք է հանդէս գան յօգուտ Բէլգիայի։

◆ Լօնդօնից տեղեկացնում են, որ այնտեղ ապրող իտալական պահեստիները իրանց կառավարութիւնից հրաման են ստացել պատրաստ լինել։

◆ Կոպէնհագէնից հաղորդում են, որ Բեռլինում յայտարարութիւն է կպցված այն մասին, որ զինուորական ծառայութեան են կանչվում 1886, 1887 և 1888 թ. թ. լանդշտուրմիստները։

◆ Գերմանական կառավարութիւնը յարքունիս է գրաւել բոլոր տեսակի մետաղը։

◆ Իտալական լրագիրների ասելով, Տրիէնտը և Տրիէստը լի են գերմանական զօրքերով։ Փողոցների անկիւններում դըրված են թնդանօթներ։

◆ Ռուս-գերմանական և ռուս-աւստրիական ճակատամարտերը ներկայումս ստացել են չափազանց լարված բնոյթ։ Պատմութիւնը չէ յիշում այնպիսի խոշոր կռիւներ, ինչպիսիները այս րոպէիս տեղի են ունենում արևելեան ռազմադաշտում։ Գերմանացիները ճիգ են գործ դնում գրաւել Վարշաւան։ Նրանք գործի են հանել իրանց բոլոր մեծ թնդանօթները։

◆ Սերբ-բօլգարական յարաբերութիւնները, շնորհիւ Սերբիայի ռուսաց դեսպան իշխ. Տրուբեցկոյի գործողութիւնների, լաւանում են։

◆ Գերմանիայում գարեջուրը թանգանում է։

ՊԱՐԻԶԻ ՀԱՅՈՑ ՈՒՂԵՐՁԸ

Պարիզի հայ գաղութը նոր տարվայ առթիւ ուղարկել է ֆրանսիական հանրապետութեան նախագահին մի ուղերձ, խմբագրութեամբ Ա. Չօպանեանի։ Այդ ուղերձի պատճէնը լոյս է տեսել «Թան» կիսապաշտօնական լրագրի մէջ։ Ահա նրա թարգմանութիւնը, որ մեզ ուղարկել են Պարիզից։

Պարոն նախագահ,

Կը մաղթենք Ֆրանսային բարեբաստիկ տարի մը, և համոզուած ենք, որ զայդ իրեն մաղթելով՝ ամբողջ աշխարհիս մաղթած կըլլանք։ Կը մաղթենք իրեն՝ վերջնական յաղթանակը այս դիւցազներգական պայքարին մէջ, զոր, իր ազնիւ դաշնակիցներուն հետ, ան կը մղէ բռնութեան դէմ։ Կը մաղթենք, որ ազատութեան արշալոյսը, զոր Ֆրանսայի մաքուր ու փառաւոր զէնքերը Մառնի խորհրդանշանական յաղթանակին մէջ շողացուցին, մեծնայ վաղը, դառնայ շլացուցիչ առաւօտ՝ որուն վեհ պայծառութիւնը աշխարհս պիտի լուսաւորէ և վերանորոգէ. ու նորեկ տարին՝ ատով պիտի ըլլայ մարդկային տարեգրութեանց մէջ ամենէն բարեբաստիկը։

Հաւատարիմ իր ազատական վաղեմի աւանդութեանց, մեր ժողովուրդը իրեն համար պատիւ մը համարեց առաջին պահէն իսկ, այս նուիրական պայքարին մէջ, իր անձնուիրութիւնն ապացուցանել իրաւունքի ախոյեաններուն։ Մեր եղբայրներէն քանի մը հարիւրներ, ոմանք Ֆրանսայի հայ գաղութներուն պատկանող, այլք՝ աշխարհիս ամեն անկիւններէն եկած, երկու ամսէ ի վեր եռագոյն դրօշին ծալքերուն տակ կը կռուին, և ահա ինչ որ ռազմաճակատէն մեզի կը գրէ անոնցմէ մին. «Հայերը գոհ են, որ վերջապէս առիթը գտան ցոյց տալու, թէ ամեն զոհողութիւն յանձն առնելու պատրաստ էին Ֆրանսայի համար, և կամաւորները, որ այս պահուս ռազմաբեմին վրայ կը գտնուին, ինքզինքնին երջանիկ կը զգան, որ կարող են անոր համար իրենց արեան մինչև վերջին կաթիլը թափել։ Կը բաւէ, որ կարենանք ծառայութիւն մը մատուցանել՝ ինչքան ալ չնչին ըլլայ վեհանձն Ֆրանսային, ինչ փոյթ, եթէ բոլոր հայ կամաւորներէն ոչ մէկը ետ դառնայ»։

Սեմին վրայ տարիի մը, որ քաղաքակրթութեան բաղդը պիտի վճռէ, մեր սրտերը անհուն սիրով, աքանչացմամբ ու երախտագիտութեամբ լեցուած՝ դէպի հերոսական ու քաղցր Ֆրանսան, որուն աննման կուլտուրան մեր ժողովրդին մտաւոր վերածնունդին գլխաւոր առաջնորդն է եղած և որուն մեծ քաղցենիները մեր աղէտի օրերուն մէջ այնքան ազնուօրէն մեր ազգային դատը պաշտպանած են, մեզի պարտք կը համարինք խնդրել ձեզ, պարոն նախագահ, որ հաճիք, բովանդակ ազատական մարդկութեան բարեմաղթութեանց հետ, ընդունիլ և մաղթանքները Պարիզի հայ գաղութին։

ԱԶԳԵՐԻ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԸ 1914 Թ.

V

Այժմ մեզ հետաքրքրում է այն անհանգստացնող հարցը, թէ ինչ վախճան կարող է ունենալ ազգերի այս անօրինակ պայքարը։ Այս հարցին պատասխանելը դժուար է, որովհետև երկու իրար դէմ ծառացած ախոյեաններից ոչ մէկին ոյժի բացարձակ գերակշռութիւն տալ չես կարող։ Եթէ ախոյեաններից մէկը թւով է գերազանցում, միւսը օժտված է և գերազանցում է իր բարձր տեխնիկայով, կռւելու կատարելագործված զէնքով։ Բացի այդ՝ «յաղթանակ» բառը չափազանց առաձգական է, մանաւանդ այս դէպքում։ Օրինակ, պատերազմի սկզբում ֆրանսիացիների և անգլիացիների համար յաղթանակ՝ նշանակում էր Գերմանիայի կատարեալ պարտութիւնը, Հօհենցօլլերնների անկումը, կայսրութեան տապալումն ու մանր պետութիւնների վերականգնումը, Էլզասի և Լօթարինգիայի ետ գրաւումը, դաշնակից զօրքերի՝ Բեռլինին մտնելը և այլն։ Սակայն այժմ պահանջները այլ բնոյթ են ստացել. յաղթանակ առնել՝ ֆրանսիացիների համար նշանակում է՝ գերմանացիներին դուրս վանել ֆրանսիական տերրիտօրիայից, գրաւել Էլզասն ու Լօթարինգիան և վերականգնել ոտնահարված Բէլգիայի անկախ գոյութիւնը։ Նոյնը կարելի է ասել նաև Անգլիայի մասին, և եթէ վերջինս մտքում էր վերջնականապէս տիրելու գերմանական գաղութներին և կործանելու նրա զինուորական նաւատորմիղի գոյութիւնը, այժմ սակայն դրութիւնը փոխվել է, և տիրելուց առաջ Անգլիան պէտք է յաղթող հանդիսանայ մինչև այժմ դեռ կռւող գաղութներում Աֆրիկայում և ապա դաշնակիցների ցամաքային ոյժերով ջախջախի տակաւին ուրիշ հողի վրա պատերազմող թշնամուն։ Ուստի եթէ Անգլիային աջողվի իր ծրագրի մի որոշ մասը իրագործել, ապա դա էլ մեծ յաղթանակ պիտի համարել։

Միևնոյն առաձգական բացատրութիւն պիտի ունենայ «յաղթանակ» բառը նաև Գերմանիայի համար։ Սրա ծրագիրն աւելի լայն էր, քան գուցէ դաշնակիցներինը։ Գերմանիան երազում էր՝ ջարդել Անգլիայի թևերը և միջազգային արդիւնաբերական շուկայի տիրապետութիւնն իր ձեռքը ձգել, գրաւել Պարիզը, յաղթել ֆրանսիացիներին և նրանցից մի խոշոր կօնտրիբուցիա ստանալ. խլել Ռուսաստանից ամբողջ Լեհաստանն ու Մերձ-Բալտեան երկիրը և հիմնել իր հեգեմօնիան բովանդակ Եւրօպայում։ Սա էր Գերմանիայի երազած յաղթանակը։ Սակայն այժմ ամեն ինչ փոխվել է։ Նրա հանդէպ կանգնած են այնպիսի թշնամիներ, որոնց գերազանց ոյժերին դիմադրելն ու իր կայսրութեան տերրիտօրիան և գաղութների ամենափոքր մասը թէկուզ անձեռնմխելի պահելը խոշոր յաղթութիւն պէտք է համարել Գերմանիայի համար։

Ահա որքան առաձգական բովանդակութիւն ունի «յաղթանակ» բառը։

Да будетъ побѣда! ասում է ռուսական դեմոկրատական մեծահատոր պարբերականներից մէկը։ Ռուսաստանը պէտք է յաղթող դուրս գայ այս պայքարից յանուն քաղաքակրթութեան և պրոգրէսի,—շարունակում է նա։ Ուրեմն եթէ կռիւը յանուն որոշ իդէալների է, ապա հակառակորդի ներկայ գոյութիւնը հակառակ է քաղաքակրթութեան և պրոգրէսի։ Իսկ որովհետև այս վերջին երևոյթները արդիւնք են լինում պատմական անցեալի, ուստի և այդ հակառակորդը երբեք էլ քաղաքակիրթ և կուլտուրական չէ եղել. ուրեմն մենք մոլորված ենք եղել...

Ռուսաստանի ներքին շահերը պահանջում են անպայման յաղթող հանդիսանալ ներկայ ահեղ կռւում։ Նրա յաղթութիւնը կարևոր է յանուն իր երկրի քաղաքակրթութեան և պրոգրէսի։ Նա ամենից առաջ պէտք է ազատագրվի գերմանական անտեսական նուաճումների լծից։ Նա մինչև այժմ անտեսապէս գերիշխող Գերմանիայի ամենահսկայ կօլօնիաներից մէկն է եղել։ Ռուսաստանը այն երկրներից է, որը մինչև այժմ էլ անտեսական կախման վիճակումն է օտար կապիտալից։ Ստիպված լինելով իր երկրում արտադրվող հում նիւթը օտարների համար արտահանելու, նա ուրիշների արդիւնաբերած ապրանքներն է ներմուծում։ Զարկնելով արդիւնաբերութեան և առևտրի ինքնուրոյն լայն մասշտաբ, նա ստիպված է ներս թողնել օտար կապիտալ օտար առևտրի և արդիւնաբերութեան համար, այլ ոչ սեփական ինդուստրիայի զարգացման։ Ըստ որում և Ռուսաստանը մինչև որ չազատագրվի զօրեղ հարևանի անտեսական նուաճումներից, նա չէ կարող զարգացնել իր արտադրող ոյժերը, չէ կարող իրան համար անտեսական ազատ զարգացման ուղի հարթել, ըստ որում չէ կարող նաև քաղաքական ու սօցիալական ազատագրում ձեռք բերել։ Ուրիշ ելք չը կայ ներկայ կացութիւնից։ Ռուսաստանը պէտք է լարէ և լարել է իր բոլոր ոյժերը անպատճառ յաղթելու յուսով։ Այլապէս՝ պարտութեան հետևանքը անմխիթար է. պարտութիւնը կը բերէր նրան Լեհաստանի և Մերձ-Բալտեան երկրի և հարաւ-արևմտեան նահանգների կորուստը, այսինքն պետութեան այն մասերի, որոնք արդիւնաբերութեամբ և գիւղատնտեսութեամբ ամենազարգացած երկիրներն են։ Դրա վրա կաւելանար պատերազմական տուգանքը, իսկ արտաքին աշխարհում կորուստ կը մատնվէր Պարսկաստանի հիւսիսը, Սև ծովը կը կորցնէր իր ողջ նշանակութիւնը, իսկ նրա առաջխաղացութիւնը դէպի Փոքր-Ասիա՝ կանգ կառնէր երկար ժամանակով։ Յաղթութեան դէպքում սակայն նուաճումների լայն ասպարէզ է բացվելու նրա առջև. նա ձեռք կը բերէ նախ անտեսական ներքին անկախութիւն, կը ստանայ Գալիցիան, կը բացվեն նրա առջև նեղուցները և հայկական լեռները, ընդմիշտ կը տիրէ Հիւսիսային Պարսկաստանին և կ՚իշխէ Մօնղոլիայում։

Ռուսաստանը չէ միայն օգտվողը յաղթանակներից. աւելի հարաւում, աւելի շլացուցիչ հեռանկար է բացվելու Անգլիայի առջև. նա վերջնականապէս տիրելու է Եգիպտոսին, Աֆրիկայի ամբողջ հարաւին, գերմանական գաղութների ամենամեծ մասին, իշխելու է Արաբիայում, Միջագետքում, Պարսկաստանի հարաւում, միջազգային առևտրական շուկայի գլխաւոր տէրն ու տնօրէնը դառնալով։

Ինչ վերաբերում է Ֆրանսիային, սա ևս յաղթանակներից խոշոր օգուտներ պիտի ստանայ. նախ նա յետ է խլելու իր Էլզաս-Լօթարինգիան, երկար ժամանակով ապահովելու է աֆրիկական իր տիրապետութեան մէջ մտնող Սահարան և Սուդանը և ապա անխռով իշխելու է Սիրիայում։

Եւ այս ամենը այն դէպքում միայն, եթէ դաշնակիցները կատարեալ յաղթութիւն

Ֆ Ե Լ Ի Ե Տ Օ Ն

«ԵՊԻՍԿՈՊՈՍ» ՉԱԼԽՈՒՇԵԱՆԸ ՓՈԽԱՆԱԿ ՏԻՐԱՑՈՒԻ ԴԵՐՈՒՄ

«Екатеринодаръ. Братья Аведовы перевели для бѣженцовъ армянъ епископу Чалхушяну 2000 рублей».

(«Рус. Сл.»)

«Եկատերինօդար։ Եղբարք Աւեդեանները փախստական հայերի օգտին փոխադրեցին եպիսկոպոս Չալխուշեանին 2000 րուբլի»։

(«Рус. Сл».)

Եպիսկոպոս Չալխուշեան—այս անունով մկրտեց Մոսկվայի ամենատարածված ռուսաց թերթը Նոր-Նախիջևանի «միակ» հասարակական գործիչ Գրիգոր Չալխուշեանին։

Եպիսկոպոս Չալխուշեան...

Ի հարկէ Չալխուշեանը եպիսկոպոս չէ։ Հոգևոր այդ բարձր աստիճանին նա երբէք չէ հասել. ոչ միայն եպիսկոպոս, այլ իսկի վարդապետ էլ չէ նա և ոչ էլ հասարակ աբեղայ, այլ միայն... տիրացու և յոյժ տիրացու։

Ինչու տիրացու, այլ ոչ եպիսկոպոս։

Ասեմ։

Տիրացուն (թող մեծահոգօրէն ներեն ինձ բոլոր ի պաշտօնէ տիրացուները) նա է, ով լաւ փոխ է ասում, անգիտակցաբար կրկնում քահանայի ասածները, նրան ձայն է պահում, սպասաւորում, նրա փիլօնն ու շուրջառը մաշ ածում և նրա հետ, ընկած տնէ-տուն, փող ժողովում։

Այսքան պարտականութիւններից ամենից գլխաւորը, սակայն, տիրացուի համար փոխ ասելն է։

— Ապրե՛ս, տիրացու, լաւ փոխ ես ասում։

— Կեցցէ՛ տիրացուն, ձայնն անսպառ. տես ինչպէս կլկլացնում է։

Այսպէս են գնահատում մեզնում տիրացուներին, և տիրացուն, լսելով այս գովասանքները, ուռչում, փքվում է, որովհետև նրան՝

Գնահատում են։

Ահա այդպէս է նաև Գրիգոր Չալխուշեանը, ըստ «Русское Слово»-ի՝ «եպիսկոպոս» Չալխուշեանը։

Նա միշտ էլ «փոխ է ասում»։

Միշտ լաւ կլկլացնում է այն, ինչ որ որոշ օրու, որոշ ժամանակ ասում է այսօր Էջմիածինը, վաղը մի ուրիշ «հեղինակաւոր» անձ, կամ յոյժ ազգասէր և ազգափրկիչ մի հաստատութիւն։ Եւ տեսար՝ մէջտեղն եկաւ մեր տիրացու Չալխուշեանը, հագաւ շապիկը, հազաց, վիզը ձգեց և սկսեց ձայն պահել ու կլկլացնել...

Լսում ես նրան և ժպտալով ասում.

— Молодецъ, տիրացու, ձայնդ անսպառ. ճիշդ է, լաւ կլկլացնում ես, լաւ ձայն ես պահում, բայց մի քիչ կամաց, տիրացու, ականջներս տարար։

Եւ ուռչում, փքվում է մեր տիրացու Չալխուշեանը։

Չէ որ նրան գնահատում են, գովում են՝ «молодецъ» են ասում։

⁂

Բայց մի հարց տանք։

Ո՞րն է այն աղօթքը, որը միշտ և հանապազ ասում ու կրկնում է տիրացու Չալխուշեանը և որի համար նրան բոլորը երեսանց «Կեցցե՛ս, տիրացու» են ասում, իսկ քթերի տակին ժպտում են։

— Փողը։

Փողից այն կողմը տիրացու Չալխուշեանը ուրիշ Աստուած չի ճանաչում։

Եւ... խնկարկում է փողը, խնկարկում է փողատէրերին, նրանց մասին յօդուածներ գրում, ոգևորվում, ձայնը կլկլացնում.

«Խոնարհեցո՛ գլխ, Տէր, զի Թաթոսն փող տուեց.
«Ապրեցո՛, Տէր, զԹաթոսն, զի փող տուեց...
«Անկցո՛, Տէր, զՄարկոսն, զի փող չը տուեց...
«Անիծեա՛ զնա, Տէր, զի փող չը տուեց...»։

Ահա տիրացու Չալխուշեանի տարիներ շարունակ ասած բոլոր փոխերն ու կլկլոցները...

⁂

Յիշում էք, ընթերցող, մի երեք տարի սրանից առաջ տիրացու Չալխուշեանի փոխասացութիւնը, որի առիթով նա, ինչպէս ասում են, «Въ галошу сѣлъ». Պատմեմ.

Չը գիտեմ ինչ առիթով «հայոց ազգին» փող էր հարկաւոր, և ահա հրապարակ բերեցին տիրացու Չալխուշեանին իր իսկական ամպլուայի մէջ։

Եւ նա ձգվեց, հազաց, ձայնը մաքրեց ու սկսեց.

— Ո՜վ հայ մանուկներ, առէք ձեռքներդ մոմեր, ծունկ չոքէք և ձեր «Հայր-մեր»-ի մէջ ամեն օր յիշէք հաջի Թաթոսին, Մարկոսաղային. յիշէք նրանց և աղօթեցէք նրանց համար։

Եւ այս հակամանկավարժական, կասենք՝ անբարոյական փոխասացութիւնը էժան չը նստեց տիրացու Չալխուշեանին։

Ամեն կողմից յարձակվեցին նրա վրա։

— Տիրացու,—ասացին,—շատ հանեցիր, переборщилъ. բաւական է, ձայնդ կտրիր։

Եւ... ձայնը կտրեց տիրացու Չալխուշեանը. դէս ընկաւ, դէն ընկաւ, այս ու այն արդարացումը փնտռեց, բայց չեղաւ. մարդը շատ էր կլկլացրել...

Անցաւ մի քանի ամիս։ Եւ «հայոց ազգին» փող էր հարկաւոր, և տիրացու Չալխուշեանին դարձեալ մէջտեղ հանեցին...

«Խոնարհեցո՛ գլխ, Տէր, զի Թաթոսը փող տուեց.
«Ապրեցո՛, Տէր, զԹաթոսն, զի փող տուեց...»։

Եւ բարկացաւ տիրացու Չալխուշեանը։

— Ինչպէս, ինքը այնպէս կլկլացնէ և փող չը տա՞ն։

Եւ... և սկսեց հայհոյել ու անիծել Մարկոսին էլ, Թաթոսին էլ, նրանց օխտը պորտն էլ։

«Անկցո՛, Տէր, զՄարկոսն, զի փող չը տուեց.
«Անիծեա զնա, Տէր, զի փող չը տուեց...»։

Լսեցին նրան աղա Մարկոսն ու հաջի Կիրակոսը և մի կուշտ ծիծաղեցին։

— Ոչինչ, մեր տիրացուն է. այսպէս էլ կասի, այնպէս էլ. դա նրա փոխասացութիւնն է. սովոր ենք։

⁂

Սրանից երկու թէ երեք տարի առաջ ես առաջին անգամ տեսայ տիրացու Չալխուշեանին... Թիֆլիսում։ Առաջնորդարանում հաւաքվել էին ազգային փողատէրները, դարձեալ կարծեմ, «հայոց ազգը... փրկելու»։ Դրանց մէջն էր, ի հարկէ, և տիրացու Չալխուշեանը։

Նախագահը «մի սրտառուչ ճառով» բացեց ժողովը, և ապա սկսեցին իրար ետևից «արտայայտվել»։ Խօսեց և տիրացու Չալխուշեանը։

— Ո՞վ է խօսողը,—հարցրեց կողքիս նստած մի պատգամաւոր։

— Գրիգոր Չալխուշեանը,—ասացի։

— Չալխուշեա՞նը. նա, որ բոլ փող է ժողովում՝ Նախիջևանից։

— Այո, նա ինքը,—պատասխանեցի ես։

Եւ գաւառացի խեղճ պատգամաւորը սկսեց մանրազննին նայել ու զննել նրան։ Չալխուշեանը, չը գիտեմ ինչու, խօսում էր բարկացած, վայրացած. ճիշդ և ճիշդ լորդ Բիկօնսֆիլդի նման. նա սպառնում էր այս կոնգրէսին՝

— Եթէ իմ պահանջներս չանցնեն, ես էս կուզեմ իմ անցաթղթերս և 12 ժամից... կը թողնեմ Թիֆլիսը։

Փոքր հարց էր, և բոլորը այս սպառնալիքից սարսափեցին, նոյնիսկ գոյնը գցեցին։

Միայն մի խամ աղայ գտնվեց, որը, չիմանալով թէ ո՛վ է սպառնացողը, բարձր ձայնով արտասանեց.

— Скатертью дорога! բարի ճանապարհ։

Պէտք էր տեսնել թէ ինչպէս գոյնը գցեց տիրացու Չալխուշեանը. իսկ նախագա՞հը, ժողովականնե՞րը։ Կարծում եմ, թշուառ ու համարձակ աղային յետոյ պատուիրեցին՝ անմիջապէս խարակիլ գործել հէնց այդ տեղ՝ առաջնորդարանի միւս սենեակում, որ տեսնի նրա դիւկը Չալխուշեանը և տանեն իրանց ամենամեծ թշնամու՝ Գերմանիայի վրա։ Իսկ Գերմանիային յաղթել՝ նշանակում է տապալել կայսրութիւնը, բաժան-բաժան անել այն, ընկճել ու կազմալուծել աւստրօ-ունգարական դուալիզմը և թիւրքական տիրապետութիւնը նեղուցների, Սև ծովի և Պոլսի շուրջը։

Ահա որն է իսկական յաղթանակը դաշնակիցների համար։

Да будетъ побѣда!

Սակայն նոյն տենչով են տոգորված կազմակերպված հակառակորդները։

Գերմանիան պայքարում է,—ասում են նրանք,—յանուն կուլտուրայի, ազատութեան և երկարատև խաղաղութեան, և սուրը չի դնի պատեանի մէջ՝ մինչև որ ընդմիշտ չապահովի իրան դրսի յարձակումներից։ Գերմանիան կը յաղթանակի,—պնդում են նրանք,—որովհետև նա պէտք է յաղթանակի. այլապէս Եւրոպային բարբարոսութիւնն է սպառնում։ Գերմանիան պատերազմում է իր արևելեան հարևանի հետ, որովհետև սրա կազմակերպութիւնը ռէակցիոն է ըստ ամենայնի։

Այս բոլոր առարկութիւններն ու պատճառաբանութիւնները անհիմն են անշուշտ, որովհետև գերմանական արշաւանքներով չէ որ վերանալու է մի երկրի ռէակցիոն ռէժիմը։ Մի ժողովուրդ վերածնվելու բոլոր հիմքերն ու աղբիւրները իր ներսը պիտի ունենայ. ազատութիւնն էլ, բռնութիւնն էլ միշտ ներքին պայմանների վրա են հիմնված, ներքին ազատութիւնը նրա իսկական ազատութիւնն է, արտաքինը ձևական և անհետևանք։ Աւտօնօմիան քաղաքական անկախութեան նախապայմանն են համարում։ Սակայն նայեցէք Ալբանիային. նրան եւրոպական կոչված կօնցերտը օժտեց աւտօնօմիայով։ Քանի գրոշի գին ունի դա այդ երկրի համար, երբ ներսը համապատասխան պայմաններ չը կան։ Եւ ալբանական աւտօնօմիան քաղաքական մի դատարկ հնչիւն մնաց և ուրիշ ոչինչ։

Մի երկրի ներքին արտադրական ոյժերի ազատ զարգացման մէջ պէտք է որոնել նրա կեանքի հայելին, ապագայի հեռանկարը, որովհետև այդ ոյժերն են բերում իրանց հետ և՛ քաղաքական և սօցիալական ազատութիւն։

Այս ամենից յետոյ ինքն ըստ ինքեան առաջանում է մի հարց. այս ահեղ պատերազմից յետոյ կը լինի՞ն արդեօք նոր պատերազմներ, թէ սա վերջինն է։ Այն էնտուզիազմը, որով համակվել էին շատերը պատերազմի սկզբում, հաւատ էր ներշնչել մարդկանց, թէ այժմ ջախջախվելու է գերմանական միլիտարիզմը, որով սպառազինման և պատերազմի գաղափարը ընդմիշտ կը վերանայ իրականութիւնից. մարդկային հասարակութեանը այլ ևս վիճակված չի լինի տեսնել կազմակերպված մարդասպանութիւն, աւերածութիւն, արիւնհեղութիւն, որ աշխարհին տիրելու է մի տեսակ երջանկութիւն և այլն և այլն։

Իրականութիւնը սակայն այլ բան է ասում մեզ։ Քանի գոյութիւն ունի հասարակական ներկայ կազմակերպութիւնը, պատերազմն ու փոխադարձ ոչնչացումը անխուսափելի է։ Զարիքների արմատը վերջինի մէջ պէտք է որոնել։

Միլիտարիզմը վերջ ունենալ չէ կարող, մինչ վերջ չունենայ նրան սնող պայմաններն ու միջավայրը։ Եթէ մինչև այժմ միլիտարիզմի կենտրօնավայրը Գերմանիան էր, սրա պարտութիւնից յետոյ նա փոխադրվելու է այլ տեղ։ Երկիրներ նուաճելը բաւական չէ. հարկաւոր է զէնքով նուաճածը զէնքով էլ պահպանել։ Եւ ահա աղբիւրներից մէկը, որից բղխում է միլիտարիզմի թագաւորութիւնը։ Միլիտարիզմը առաջ է գալիս կամ նուաճելու ձգտումից կամ նուաճածը պահպանելու անհրաժեշտութիւնից։ Եթէ այս երկու ցանկութիւններից զերծ լինէին պետութիւնները, միլիտարիզմը անմիջապէս կը գոլորշիանար։

Սակայն աշխարհի տէրերը դեռ մեծամեծ տենչեր ունեն։ Ներկայ պատերազմից յետոյ միլիտարիզմը նոր թափ է ստանալու։ Սիմպտօմները ակներև են։ Հիւսիս-Ամերիկեան Միացեալ-Պետութիւնները արդէն ուժեղացնում են իրանց նաւատորմը 18 նոր ռազմանաւերով։ Եապօնիան ծրագիր է մշակում մշտական զօրքերի թիւը զգալի կերպով աւելացնելու համար։ Անգլիան նախապատրաստում է հասարակական կարծիքը՝ զինուորակոչութիւնը պարտադիր դարձնելու համար։ Ռուսաստանը անհրաժեշտօրէն իրագործելու է իր նաւատորմային հսկայական ծրագիրը։

Եւ այս ամենը բերում է մեզ այն համոզման, որ ազգերի ներկայ պատերազմին չէ կարող յաջորդել յարատև խաղաղութիւն Եւրոպայում։ Այլ ժամանակաւոր զինադադար։

Սուրխաթեան

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՅՕԳՈՒՏ ԿԱՄԱՒՈՐՆԵՐԻ

Ստացանք 1) Ջիլիից (Սըր-Դարինսկի շրջ.) հայ հասարակութիւնից՝ 76 ր., 2) Գրիշինօ կայարանից, Գ. Տէր-Գրիգորեանի միջոցով, Բախմուտ քաղաքի հայերից հանգանակված՝ 25 ր.։ Գումարն է 101 րուբլի։ Նախորդ ստացված 4883 ր. 57 կ. գումարի (տես «Մշակի» № 16) հետ ստացել ենք 4984 ր 57 ր.։

ՅՕԳՈՒՏ ՀԱՅ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ

Ստացանք 1) Ֆեդչենկօ կայարանից (Միջին-ասիական երկաթուղի), տեղական հայ գաղութից, Աւ. Աղաջանեանցի ձեռքով հանգանակված (ցուցակը կը տպվի) 200 ր., 2) Ջիլիից (Սըր-Դարինսկի շրջ.), հայ հասարակութիւնից (ցուցակը կը տպվի) 100 ր., 3) Սումիից, Փիլիպպոս Ալլահվերդեանից՝ 50 ր.։ Գումարն է 350 ր.։ Նախորդ ստացված 7129 ր. 07 կ. հետ (տես «Մշակ» № 16) ստացել ենք 7479 ր. 07 կ.։

Գրօզնիի նուիրատուների ցուցակը
(Տես «Մշակ» № 8)

Գ. Ն. Բարսեղեան 10 ր., Հ. Դուլթեան և Ա. Մինասեան 5-ական ր., Կ. Մանուսաջեանց 3 ր., Ե. Բալասանեան 2 ր., Ծ. Աղաջանեան, Ա. Զօրաեան, Ա. Դուլթեան, Ա. Դուլթեան. Ե. Պապասեան, Ս. Սիմոնեան, Մ. Աւետիսեան, Ա. Ենգիբարեան, Գ. Երեմեան, Ե. Խալաթեան, Ս. Օրդինեան, Խ. Յովհաննիսեան, Թ. Կոստանդեան, Յ. Մելիքսեթեանց, Ա. Կոսեան, Մ. Առաքելեան, Յ. Յարութիւնեան, Գ. Գասպարեան, Գ. Բէգլարեան, Գ. Ազարեան, Գ. Աբրահամեան, Վ. Դալեան, Յ. Հախնազարեան, Վ. Սհակեան, Ա. Կաչարեանց, Տէր-Յովհաննիսեան, Հ. Մարտիրոսեան, Ա. Ջալիեան, Ա. Յարութիւնեան 1-ական ր՝։ Ընդամենը 54 ր.։

ՄՏՔԻ ԱՀԱԲԵԿՈՒՄԸ

Հարկաւ, ամեն մի որոշում իրագործելու համար պէտք է հրաժարվել տարատամութիւնից, լարել ճիգ ու ջանք և անսայթաք ընդառաջել դէպի նպատակ։ Ընդունել, որ այս պարագայում ամեն ոք գոհ կը մնայ գլխաւոր դերակատարներից, ի հարկէ անկարելի է։ Ոչ մի գործ ընդհանուր համաձայնութեամբ չէ պսակվում. դժգոհութիւնները բարդ կառուցուածքներ ունեցող հասարակութիւնների մէջ անխուսափելի են։ Սակայն կան տարբեր դժգոհութիւններ։

Կարող է դժգոհութիւնը շարժառիթ ունենալ որևէ չար նպատակ, չկամութիւն և խափանարար կամք։ Կարող է նա արդիւնք լինել անկեղծ մոլորութեան և կարող է, որ նա բղխի գործելակերպի տարբերութիւնից։

Այսօր հրապարակի վրա դրված է թիւրքահայ դատի լուծումը։ Ոչ մի հայ անբարեացակամ վերաբերմունք չունի դէպի այդ դատը, սակայն այնքան էլ գաղտնիք չէ, որ շատ ու շատ հայեր դժգոհ են այն քաղաքականութիւնից ու կատարվող գործերից, որ արվում են այդ դատի աջող լուծման համար։ Նրանք, որ այժմ հրապարակի տէրն են, չեն կամենում ըմբռնել, որ դժգոհութիւնը բղխում է սրտացաւութիւնից ու անկեղծ համոզմունքից։ Այդ մարդիկ եթէ իրանք չեն հաւատում, գոնէ ջանքեր են անում հաւատացնելու, որ դժգոհները իրանց հոգով ու սրտով օտար են թիւրքահայերի ակնկալութիւններին, որ այլապէս մտածողները չար դիտաւորութիւններից դրդված են խօսում ու դատում։ Եւ ահա նման մտայնութեամբ առաջնորդվելով՝ նրանք բանադրում են դժգոհներին, աշխատում են վարկաբեկել նրանց խօսքերի մաքրութիւնը և մռայլ գոյներով պատկերացնել հակառակորդներին։

Մենք խորապէս ցաւում ենք, տեսնելով այս անտեղի և դատապարտելի արշաւանքը։ Հայութիւնը այնպիսի հասարակական զարգացում ունի, որ անխուսափելի երևոյթ պիտի համարել մտքի տարբեր երանգաւորումը։ Դահճի դեր կատարել և ջանալ բոլորի մտածումները վերածել մի յայտարարի՝ դա պատիւ չէ բերում մեր քաղաքակրթութեան։

Մանաւանդ անթոյլատրելի պիտի համարել այն արշաւանքը, որ տարվում է մեր պետականօրէն մտածող գործիչների դէմ։ Այդպիսի մարդկանց հայ ճղճիմ իրականութեան ընտելացած գործիչները համարձակվում են հայութիւնից օտարացած հռչակել։ Դա մի երևոյթ է, որ սպառնում է մեր միտքը ամփոփել լոկ ազգային առանձնայատուկ հանգամանքների վրա և մեզ խորթացնել լայնօրէն դատելու և գործելու ձգտումներից։

Թիւրքահայ դատը արդարացի է մարդկային լուսաւոր խօսքերի առաջ։ Նա իր մէջ այնքան սրբութիւն է պարունակում, որ միանգամայն անտեղի է անմաքուր ժխոր ստեղծել և հալածանքի դրօշակ պարզել տարբեր մտածողների դէմ։ Դրանով միայն կարելի է վտանգել մի պարզ ու արդարացի դատ, իսկ շահել՝ երբէք։

Ռուս-թիւրքական պատերազմի սկզբից մենք ականատես ենք, թէ որպիսի ահեղ զէնք է գործադրվում այլապէս մտածողների դէմ։ Ահա մի ցուցակ այդ տխուր սևագործութիւնների։

Վ. Տոտոմեանը, Քր. Վերմիշեանը և Պ. Կարա-Մուրզան հայութիւնից օտարացած հռչակվեցին։ Մեր «իսկական հայերի» կարծիքով՝ այդ գործիչները իրաւունք չունէին խօսելու ազգի ցաւերից։

Հայ լաւագոյն գործիչներից մէկի՝ պ. Անկախի հասցէով ծամածռութիւններ եղան։ «Кавк. Слово» թերթը կասկածի տակ առնվեց։

Կեղծ բարեկամներ յայտարարվեցին առաջաւոր դէմօկրատիայի ներկայացուցիչներ և կովկասեան պատգամաւորներ Սկօբելեվ ու Չխենկէլի։

Միանգամայն դատապարտելի լեզու բանեցվեց Պ. Ն. Միլիւկօվի դէմ։

Մարդիկ իրանց իրաւունք համարեցին հրապարակ հանել Բ. Իշխանեանի անձնականին վերաբերեալ մի աննշան դէպք, մոռանալով որ տարիներ առաջ մի կուսակցութեան «բիւրեղացման» շրջանում Միք. Վարանդեանը գրել է, թէ այդ կուսակցութեան շարքերն են մտել «հարուստ բնազդների» տէր մարդիկ, իսկ այսօր էլ նրանք չեն իջել հրապարակից։

Ապա յիշենք, որ «Մշակի» քննադատութիւնը ազգակործան հռչակվեց, իսկ թերթի խմբագիր Հ. Առաքելեանը փուշ դարձաւ մանր ու մեծ փըքլիշների աչքում։

Ռուս-թիւրքական պատերազմը չէ վերջացել։ Եւ մենք համոզված ենք, որ ականատես պիտի լինենք նորանոր բանադրանքների ու արտաքսումների։ Այս արդէն գործունէութեան որոշ սիստեմ է, որ ձգտում է ահաբեկել հասարակական միտքը, որ ջանում է մեր ժողովրդի բաղդի անօրինումը ամփոփել առանձնաշնորհեալ մի խմբակի ձեռքում։

Հայ հասարակութիւնը պիտի ցոյց տայ, որ ինքը գլխակորոյս հօտ չէ, որ իրա համար անհանդուրժելի է մտքի ահաբեկումը։ Ամեն սրտացաւ կարծիք պիտի լսվի, ամեն մի հոսանք տեղ պիտի ունենայ ազգի ներկայացուցչութեան մէջ։

Բագու Դ. Անանուն

ՔԱՂԱՔԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆԸ

Քաղաքային բժիշկների սանիտարական խորհրդակցութիւնը, որ տեղի ունեցաւ Գ. Գ. Ալիբէգեանի նախագահութեամբ, ներկայացրել է քաղ. վարչութեանը մի առաջարկութիւն քաղաքի առողջապահութեան և վարակիչ հիւանդութիւնների տարածման դէմ հետևեալ միջոցները ձեռք առնելու. 1) իրաւունք տալ քաղ. բժիշկներին և ընդհանրապէս քաղ. սանիտարական պաշտօնեաներին հսկելու և դիտելու զօրանոցները, լազարէթները, հիւանդանոցները, դպրոցները և ընդհանրապէս բոլոր քաղաքացիական և զինուորական հաստատութիւնները։ 2) կարգադրութիւն անել այն մասին, որպէսզի այն մարդկանց մահացութեան մասին, որոնք չեն օգտվել բժշկական օգնութեամբ, անմիջապէս գրաւոր կերպով յայտնվի քաղաքային համապատասխան սանիտարական բժշկին. 3) բժշկական և սանիտարական մշտական հսկողութիւն սահմանել Թիֆլիս և Նաւթլուղ կայարաններում. 4) միջոցներ ձեռք առնել, որպէսզի հասարակութիւնը կայարաններում չափազանց չը խմբվի. 5) յատուկ սանիտարական հսկողութիւն կազմակերպել հիւանդներ և վիրաւորներ տեղափոխելու կէտում և կարգադրիչ լազարէթում. 6) միջնորդութիւն յարուցել փոսերի կեղտոտութիւնները վերացնելու համար. 7) զօրանոցների մօտ կոյուղի շինել ուղղափառների սեմինարիայի հողում (Վաքէ). 8) խնդրել Անդրկովկասի երկաթուղիների վարչութեան, որ սկարլատինով և դիֆտերիտով հիւանդները երբեք կերպով չը բժշկվեն երկաթուղային հիւանդանոցում. 9) զինել ազգաբնակութեանը կոչով, որ վարակիչ հիւանդութեան ամեն մի դէպքի մասին յայտնվի քաղ. սանիտարա-բժշկական հսկողութեան. 10) միջոցներ ձեռք առնել լաւացնելու շուկաների սանիտարական դրութիւնը։

Վերջում խորհրդակցութիւնը խնդրում է, որ արգելվի Մաղաթեան կղզու վրա ուտեստի մթերքներ, երշիկ և այլն պատրաստելու գործը, մինչև կղզում կոյուղի, ջրանցք շինելը և ընդհանրապէս կղզին բարեկարգելը։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍ

◆ Ամսիս 23-ին քաղաքագլուխը ներկայացաւ նահանգապետին և զեկուցում տուեց քաղաքի ուտեստի պաշարի և գործի մասին։ Այդպիսի զեկուցում Թիֆլիսի շըրջանի զօրքերի կօմենդանտին ներկայացրեց քաղ. վարչութեան անդամ Մ. Ա. Ջաքարէ։ Գործի դրութեան մասին մանրամասն զեկուցում տալով, քաղաքի ներկայացուցիչները աջակցութիւն խնդրեցին, իշխանութիւններից, որ բաց թողնվի վագոնների անհրաժեշտ թիւ քաղաքի համար անհրաժեշտ մթերքներ հասցնելու։ Ամեն օր միայն ալիւր Թիֆլիսի համար հարկաւոր է ոչ պակաս, քան 14—16 վագոն։ Իսկ վերջին երեք օրը ալիւր ստացվում է ոչ աւելի, քան 5—6 վագոն օրական։ Գեն.-լէյտենանտ Վօլսկի և նահանգապետը խոստացան ձեռք առնել իրանցից կախված միջոցները։ Երկուշաբթի օրը քաղ. վարչութիւնը դումային զեկուցելու է ուտեստի պաշարի և դրութեան մասին։

◆ Կովկասի քաղաքների միութիւնը հեռագրով յայտնել է ռուսական քաղաքների դաշնակցութեան՝ Մոսկվայից դեղօրայք ուղարկելու, որովհետև դրա պակասութիւն է զգացվում։ Բագուի քաղաքագլուխ Լ. Լ. Բիչը այդ մասին մի հեռագիր է ուղարկել քաղաքագլուխ Ալ. Խատիսեանին։

◆ Կովկասի քաղաքների միութիւնը մտադիր է առաջիկայ ամառը հիւանդ և վիրաւոր զինուորների լազարէթները քաղաքից փոխադրել Մուխրովան, Գոմբոր, Սուրամ, Բէլի-Կլիւչ և Դիլիջան աւանները։

◆ Այս օրերս իրաւասու Ի. Մ. Դոլուխանեան քաղաքների միութեան յանձնարարութեամբ 4 վագոն իրեր է տանում Թաւրիզի ուղղութեամբ ռուս բանակի համար։ Իրեր և մթերքներ տանելու է և իրաւասու Ս. Ա. Մինդալեվ Սարիղամիշի ուղղութեամբ։

◆ Քաղ. վարչութեան հրաւէրով այս երկու օրս Բագուից գալու են երեք բժիշկ, իսկ Մոսկվայից՝ երկու անդամահատ բժիշկ։

◆ Որոշված է փետրվարի 8-ին գումարել Կովկասի քաղաքների միութեան համագումար, որին հրաւիրվելու են Բագուի, Եկատերինոդարի, Վլադիկավկազի, Դերբենդի, Պետրովսկի և Քութայիսի քաղաքագլուխները։ Համագումարը զբաղվելու է ներկայ անցքերի առաջ բերած մի շարք կարևոր և անյետաձգելի հարցերով։

◆ Պետ. Դումայի անդամ Մ. Աջէմեանը Պետրոգրադից ուղարկել է Մարինսկի թատրոնում յօգուտ փախստականների տուած ներկայացումից գոյացած 5,000 րուբլին։

◆ Փետրվարի 8-ին կայանալու է Թիֆլիսի գաւառի ազնուականների սովորական ժողովը։

◆ Թիֆլիսում լուր է ստացվել, որ Պետրոգրադում վերջերս վախճանվել է գնդապետ Նիկ. Գէօրգիևիչ Կազբէկ, որդին՝ Թիֆլիսում յայտնի գեներալ Գ. Ն. Կազբէկի, Վրաց մեծ Գրողի։ Տարաբաղդ Ընկ. Նախագահի Գեներալի միւս որդին, երկու ամիս առաջ, անհետացել է գերմանական սահմանում եղած կռիւներից մէկում, և մինչև այսօր յայտնի չէ՝ գերի է ընկել թէ սպանվել է։

◆ Նախանցեալ օրը Կուկիայի ուղղափառ գերեզմանատանը հողին յանձնվեց կօրնետ Վիկտոր Միտ. Արադիի մարմինը։ Արադին սպանվել էր կովկասեան ռազմաբեմում։ Հանգուցեալի դագաղի վրա դրված էին պսակներ։

◆ Բարձրագոյն շնորհակալութիւն է յայտնվում Կովկասի փոխարքային, սրա քաղաքացիական մասի օգնականին, Երևանի նահանգապետ կոմս Տիզէնհաուզէնին, Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձու Ռուդոլֆին, Թիֆլիսի նահանգապետ Ստրախովսկիին, Բագուի նահանգապետ Ալիշևսկիին, Գանձակի նահանգապետ Կովալևին այն օրինաւոր կարգի համար, որ եղել է ամենաբարեք Տէրին Մեծութեան 1914 թ. նոյեմբերի 24-ից մինչև դեկտ. 4-ը Կովկասում մնալու ժամանակ։

◆ Երևանեան գնդի հրամանատար Մդիվանին դառնում է գեներալ-մայոր։

◆ Քաղաքային առաջին ապաստարանում գիշերօթիկների մէջ ծաղիկ հիւանդութիւն երևալու պատճառով, բժշկա-սանիտարական կառավարիչ բժ. Կ. Ստեփանեանցի կարգադրութեամբ պատուաստել են բոլորին ծաղիկ, նախօրօք ուղարկելով բոլոր գիշերօթիկներին բաղանիք և բաժանելով բոլորին մի-մի նոր շապիկ։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Օպերա

Կայսերական թատրոնների արտիստ՝ բարիտօն Բակլանով յունվարի 23-ին հանդէս եկաւ Արքունական թատրոնում «Րիգօլէտտօ» օպերայում, որի մէջ նա կատարում էր ծաղրածուի դերը։

Բակլանովը այն լուրջ, մտածող ու տաղանդաւոր արտիստներիցն է յիրաւի, որոնք կազմում են ռուսական երաժշտական աշխարհի պարծանքը։ Հանդիսատեսը հէնց սկզբից զգում է, որ յանձին Բակլանովի բեմի վրա խաղում է—այս բառի լաւագոյն մտքով—իսկական, խոշոր արտիստ, որի իւրաքանչիւր շարժումը կրում է համաչափ ու ներդաշնակ կնիք դերի ներքին աշխարհի հարազատ արտայայտութեամբ։

Բակլանովի ձայնը առանձնայատուկ է և իր ուժգնութեամբ իսկ զուրկ չէ լիրիկ կողմից, որից և նա դառնում է թովիչ։

Բակլանովը, անցած ունի որոշ շկօլա, միևնոյն ժամանակ հակված է իր ամպլուայի դերերին տալ իր տեսակ կօլորիտ բնոյթ, որ յաճախ նկատել է մայրաքաղաքի մամուլը, ուր այնպէս սիրում են Բակլանովին։

Աւելորդ է ասել, որ «Րիգօլէտտօյում» նա անուանի դերասանը ամբողջացրեց ծաղրածուի հոգեբանական ու տպաւորիչ դերը դառնալով թատրոնը ծայրէ ի ծայր լցրած հասարակութեան ովացիայի առարկան։

Ներկայացման աջողութեանը ոչ պակաս նպաստեցին խմբի առաջնակարգ ոյժեր՝ տ. տ. Ստարոստինա, Կովէլկօվա, պ. պ. Ջալիպսկին, Բրիոնէր, ինչպէս և օրկէստրը Գրանէլլիի ղեկավարութեամբ։

Ողջունում ենք անտրեպրէնեոր Եւլախովի ձեռներէցութիւնը, որ հրաւիրել է Բակլանովին մի քանի գաստրօլների, որպիսի երևոյթը ինքնին հազուագիւտ է Թիֆլիսի երաժշտական կեանքում։

Եւ գեղարուեստական անչափ բաւականութիւն կը ստանայ նա, ով բաղդ կունենայ լսել Բակլանովին «Ֆաուստի» մէջ՝ Մեֆիստոֆէլի դերում, այսօր երեկոյեան։

Րեցէնզէնտ

ՎԱՂՎԱՅ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

Վաղը, հայկական ներկայացումը լինելու է բենեֆիսային։ Դրվում է Օստրովսկիի «Փօթորիկ» պիէսը հայ բեմի գլխաւոր զարդերից մէկի՝ տիկին Օ. Մայսուրեանի բենեֆիսին։

Արտիստուհի Մայսուրեանը արդէն վաղուց ձեռք է բերել տաղանդաւոր դերասանուհու համբաւ և սա առաջին անգամը չէ, որ մենք «Մշակի» էջերում գնահատել ենք նրա խոշոր ձիրքը, նոյն իսկ այն րոպէներին, երբ որոշ դէպքերում քննադատօրէն ենք վերաբերվել։ Մեր անկեղծ ցանկութիւնն է եղել, որ դերասանուհի Մայսուրեանը աւելի ու աւելի կատարելագործվի և նրա տաղանդը լայն բարգաւաճում ստանայ։ Եւ մենք բնաւ չը սխալվեցինք մեր ակնկալութիւնների մէջ։ Տիկին Մայսուրեանը դարձաւ հայ դերասանական խմբի առաջնակարգ ոյժ և հայ բեմի զարդ։

Եւ ի նկատի ունենալով, թէ մեր հայ իրականութեան մէջ որքան դժուարին է տաղանդաւոր գործիչների աշխատութիւնը, թէ որքան տոկունութիւն, յամառութիւն է պէտք ճանապարհ հարթելու և ծառայելու կոչման, ի նկատի ունենալով որ տ. Մայսուրեան անցել է այդ տոկուն, յամառ ուղին և հասել նաւահանգիստը, մենք բարոյական պարտք ենք համարում յիշեցնել հայ թատրոնասէր հասարակութեան, թէ «մշակը արժանի է իր վարձին», այն ևս տ. Մայսուրեանի պէս տաղանդաւոր, արդիւնաւոր և բազմաշխատ մշակը։

Հ. Ս.

ԵՒԳ. ՏՐՈՒԲԷՑԿՈՅԻ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ

Հէնց այս րոպէին վերադարձայ իշխան Եւգենի Տրուբէցկոյի չափազանց հետաքրքրական և սիրուն դասախօսութիւնից։ Եւգ. Տրուբէցկոյը ռուս հասարակութեան մէջ բացառիկ ժողովրդականութիւն է վայելում, շնորհիւ իր անկախ ու բարձր հոգու, իր տաղանդաւոր գրչի։ Նրա յօդուածները «Рус. Вѣд.» թերթում միշտ նոր բան կասեն ընթերցողին, իրերն ու երևոյթները միշտ մի նոր գունաւորմամբ կը պարզեն։

Ահա թէ ինչու այս երեկոյ Մոսկվայի

հանգստանայ, սիրտը հովանայ։

⁂

Ասում են, որ տէրացու Զալխուշեանից ամենից աւելի վախենում է էջմիածինը. և երբ նա գնում է այնտեղ, արքեպիսկոպոսներն անգամ նրան «ձերդ բարձր գերազանցութիւն» են ասում։

Մի անգամ հարցրի մի վարդապետի.

— Հայր սուրբ, ինչու էք այդքան երես տալիս այս տէրացու Զալխուշեանին։

— Է՜հ, որդիս,—ասաց նա ինձ,—ի՞նչպէս երես չը տանք. մարդը էջմիածնի թոյլ կամարը գտել է և փող է՝ որ ուղարկում է մեզ. տեսար՝ հեռագրեց «Փոխադրեցի 5000, վաղը փոխադրում եմ 10,000, հինգ օրից 20,000»։ և էջմիածնի բերնի ջուրը գնում է։ Իսկ փողը, որդիս, հօ գիտե՞ս, ամեն ինչ է, մանաւանդ քեասիբ էջմիածնում։

Տրամաբանական էր...

⁂

Նորերումս Թիֆլիսի հայ թերթերից մէկում տէրացու Զալխուշեանը ի լուր աշխարհի յայտարարել էր, որ ինքը մշակական չէ, իսկի չէ էլ եղել, այլ միայն հրապարակախօս է, որին ամբիոն էր հարկաւոր՝ ազգին... խելք սովորեցնելու։

— Horribile dictu...

Հրապարակախօ՞ս։ Տիրացու Զալխուշեան և հրապարակախօ՞ս։ Ասացէք խնդրե՞մ։ Էդ էր պակաս։

Հրապարակախօսը նա է, ով որոշ համոզմունքներ, սկզբունքներ ունի. միշտ անյողդողդ, միշտ պատճառաբանած, լօգիկական։

Իսկ տէրացու Զալխուշեա՞նը։

«Խոնարհեցի, Տէր, գլխ, գի Թաթոսն փող տուեց.
«Ապրեցի գՄարկոսն, գի փող տուեց.
«Անկցի, Տէր, գՎիրակոսն, գի փող չը տուեց,
«Անիծեալ գնա, գի փող չը տուեց»։

Ահա տէրացու Զալխուշեանի ամբողջ հրապարակախօսութիւնը, ճիշդն ասած, նրա միակ փոխասացութիւնը։

Եւ նրա այս արժանիքը շատ լաւ է հասկացել «ազգային»—մեղա, մեղա քեզ, Աստուած, անուանեալ բիւրօն և մանաւանդ այդ բիւրօյի ստուերի տակ ապրողներն ու ազգային մի այլ տեսակի տէրացուների կօլլեգիան, որոնք Դօն-Քիշոտի սև ոսկրացած ձին հրեղէնազոյն ներկելով՝ այսօր հրապարակ են բերել և ասում են ազգին.

— Տեսնում էք այս քեահլանին. սա պիտի փրկէ ազգը. միայն թէ փող տուէք, շատ, շատ փող։

Եւ լսելով այդ ոսկեգոյն, հրեղէն ձիու մասին, մեր տէրացու Զալխուշեանը սկսել է իր ձայնը կլկլացնել...

«Ապրեցի, Տէր, գՄաթոսն, գի շատ փող տուեց.
«Անիծեալ գԹաթոսն, գի խանգարէ զմեզ...»։

իր սովորական փոխասածութիւնը։

«Խուփը գլորվել է կճուճը գտել»—ասում է ժողովրդական առածը։

— Ազգային տէրացուներն ու փոխասացները, վերջապէս, գտել են ազգային տէրացուին, իրար ծափկում են գլորվելով հոգմի ազդեցութեան տակ ու աղմուկ հանում. իսկ ազգը, խե՜ղճ ազգը կարծում է, որ դա իր մօտալուտ «փրկութեան օրն է»։

Մախլա՞ս...։

Սալ-Ման

ամենամեծ լսարաններից մինը ծայրէ ի ծայր լի էր ընտիր հասարակութեամբ։ Դասախօսութեան նիւթն էր «Նացիօնալիզմ, Կ. Պօլիսը և ս. Սօֆիան»։

Իր դասախօսութեան առաջին մասում իշխանը կանգ առնելով ներկայ բօպէի վրա՝ մատնանշեց, որ Ռուսաստանի համար հրապարակ է իջել նորից նեղուցների և Կ. Պօլսի խնդիրները, որոնցից նեղուցները կապ ունեն մեր օրական հացի հետ, քանի որ նեղուցներով են անցնում մեր արտահանած ցորենի $^{2}/_{3}$ մասը, ու Կ. Պօլիսը մի զօրեղ պետութեան ձեռքում, օրինակ Գերմանիայի, կորստաբեր դեր կարող է կատարել մեզ համար, փակելով մեր ճանապարհը, իսկ երկրորդը՝ իր ս. Սօֆիայով մեր հոգևոր բարոյական կեանքի հետ։

Ս. Սօֆիան, որ հիմնվել է Յուստինիանոսի օրօք մօտ 535—567 Թ. Թ., նպատակ է ունեցել իր շուրջը կենտրօնացնել համայն մարդկութեան, որտեղ քրիստոնէական Աստուծոյ հովանու ներքոյ բոլոր մարդիկ իբրև եղբայրներ պիտի ի մի խմբվէին աղօթելու Արարիչ Աստծուն և ջանային ձուլվել միմեանց հետ քրիստոնէական վեհ սիրով, արդարութեան և իրաւունքի վսեմ գաղափարներով, սակայն առանց ձգտելու ստրկացնել միմեանց կամ ոչնչացնել։ Այսպիսի մի կարևոր կենտրօն ծառայել է նա երկար տարիներ ժողովուրդների և մանաւանդ ռուս ժողովրդի կեանքում, որն իր հոգևոր երկերում, իր աւանդութիւնների մէջ, իր պատկերանկարչութեան մէջ միշտ պատկերացրել է ս. Սօֆիային որպէս մարդկութեան համար մի բարձր իդէալ, մի սրբատեղի, ուր պիտի ժողովվի վերածնված մարդկութիւնը։

Բայց միջին դարերից սկսած մարդկութիւնը սկսել էր ելնել իր նախնական կեանքի շրջանակից, Աստուծոյ կերպարանքը մարդու մէջ փոխվել էր կենդանու, և համայն մարդկութիւնը տարված նեղ ազգայնական միտումներով, միմեանց խժռելու անասնական ձգտումով, բացի իրանից ոչ մի ազգութիւն և ոչ մի դաւանութիւն չը ճանաչելու մոլորութեամբ՝ բաժանվել էր ու ջլատվել, մոռացել էր Աստուծուն սկսած Թագաւորից մինչև գեղջուկը, երէցից մինչև իշխանը... Եւ ահա մի անմշակ ազգութիւն գալիս է Ասիայի խորքերից, սրով ու հրով ոչնչացնում ամեն ինչ և ս. Սօֆիայից, մարդկութեան սրբավայրից վռնտում անարժան մարդկանց։

Այնուհետև ս. Սօֆիան մնում է նոյնը, միայն քրիստոնեայ մարդու մտքից ու հոգուց հեռու, նրա համար անտեսանելի, Թիւրքը չի ոչնչացնում տաճարը, քրիստոնէութեան սրբութիւնները, այլ միայն սուաղով ծածկում մօզայիկը։

Այժմ նորից դրված է ս. Սօֆիայի խնդիրը։ Սակայն ռուս ժողովուրդը որչափ արժանի է իր ներկայ հոգեկան տրամադրութեամբ, իր իդէալներով տիրելու այդ սրբավայրին։

1878 Թւականին ևս մենք մօտեցել էինք Կ. Պօլսին, բայց չը կարողացանք տիրել, որովհետև օժտված չէինք արդարութեան, վեհութեան գաղափարներով, տոգորված չէինք լայն մարդասիրութեամբ, այլ նեղ ազգայնական գաղափարով։ Ազատութիւն չէր, որ տանում էինք մեզ հետ, այլ ստրկութիւն։

Սրբութեան հասնել չէր կարելի աղտոտ հոգով, անմաքուր մարմնով։ Ռուս ժողովուրդը 1878 Թ. չէր գնում ճնշված ազգերի ազատագրութեան լայն ծրագրով։ Նա բաժանել էր Լեհաստանը, պատառ-պատառ արել լեհ ժողովրդի մարմինը։ Ի՞նչպէս կարելի էր գնալ մի սուրբ գործի, մի մեծ ողջակեզ, պատարագ մատուցանելու, երբ մենք դեռ մեր եղբօր հետ չէինք հաշտված. երբ մենք՝ ռուսներս հայութեան ազատութեան հարցը չէինք դրած, երբ մեր ժողովուրդը տօներին փողոցներում Թաւալելով էր լուսացնում իր գիշերը՝ շնորհիւ օղու. երբ մեր պետական բիւջէն հաստատված էր արբեցողութեան վրա։

Ի՞նչպէս կարող էր մի արբած ժողովուրդ մի այդպիսի մեծ հերոսութիւն անել։

Ներկայիս, երբ մենք արդէն հաշտվել ենք մեր եղբայրների, լեհ ժողովրդի հետ, երբ դադարել ենք արբելուց և Աստուծոյ պատկերը կրկին ընդունել, մեր դրօշակի վրա պիտի գրված լինի բոլոր մանր ազգերի լայն ազատագրութեան վեհ գաղափարը։ Եւ Ռուսաստանն անցած ստրկութեան ու բռնութեան դէմ ապստամբված ու մարտնչող ազգերի գլուխ՝ ազատութիւն պիտի պարգևէ ամենին։

1878 Թւին մեր ուղին Բօլգարիայի վրայով էր. այսօր 1915 Թ.՝ Հայաստանի։ Մենք պէտք է ազատութիւն տանք հայ ժողովրդին, որը դարեր շարունակ կռւել է Թիւրքական բռնութեան դէմ, դարեր շարունակ ճնշվել, կոտորվել ու ոչնչացել։ Ռուսաստանը հայերին պիտի ազատութիւն բերէ, եթէ չի կամենում, որ այդ հին, քրիստոնեայ ժողովուրդը ոչնչանայ Թիւրքի սրի տակ։

Ազատութեան, արդարութեան և իրաւունքի ճանապարհով մենք կարժանանանք Կ. Պօլսին և ս. Սօֆիային։

Բռնակալութիւն, ստրկութիւն չէ, որ մենք պիտի տանենք մեզ հետ, որովհետև բռնութիւնը և ս. Սօֆիան միմեանց հակադիր գաղափարներ են։

Ահա թէ ինչու հեռու պիտի վանենք մեզանից ազգայնական նեղ, անասնական ոգին և տոգորված մանր ազգերի՝ սերբերի, բուլգարների, յոյների, հայերի, բելգիացոց, լեհերի և այլոց ազատագրութեան վեհ գաղափարով՝ առաջ ընթանանք. և ճանապարհը դէպի Ցարգրադ բաց է մեր առաջ։ Ս. Սօֆիան գրկաբաց մեզ է սպասում...

Դասախօսութիւնը խոր տպաւորութիւն գործեց բազմաթիւ հասարակութեան վրա, որը ընդունեց և ճանապարհեց յարգելի դասախօսին ոգևորութեամբ և բուռն ծափերով։

Արսէն ք. Սիմէօնեան

Մօսկվա, 11 յունվարի

ՄԱՄՈՒԼ

Վրաց «Շաղբէվանի» լրագրի Բաթումի թղթակցի ստացած տեղեկութիւններից երևում է, որ այժմ դրութիւնը այնտեղ որոշ չափով լաւացել է և քաղաքից հեռացածներից շատերը նորից վերադառնում են Բաթում ու ձեռնարկում իրանց գործին։ Թշնամու բանակը գտնվում է այնքան մեծ հեռաւորութեան վրա, որ թնդանօթների որոտի ձայներ այլ ևս չեն լսվում քաղաքում։

Ինչ-որ անյայտ անձինք,—ասում է թղթակիցը,—շրջակայ գիւղերում լուրեր են տարածել, որ իբր թէ Բաթումում աշխատաւոր ձեռքերի մեծ պահանջ կայ։ Եւ ահա, հիմնվելով այդ լուրերի վրա, վերջին ժամանակներս բանւորների ահագին բազմութիւն է գալիս այստեղ և ձեռքերը ծալած մնում առանց գործի։ Պէտք է գիտենալ, որ,—զգուշացնում է թղթակիցը,—այստեղ բանւորների ոչ մի պահանջ չը կայ ներկայիս և թող ոչ ոք, գործ գտնելու յոյսով, ի զուր և աւելորդ ծախքերի ենթարկվելով չը դիմէ Բաթում։

ՊԵՏՐՕԳՐԱԴԻ ԼԵՀԱԿԱՆ ԹԵՐԹԸ

Ներկայ 1915 Թ. յունվարի 1-ից Պետրօգրադում վերսկսվել է լեհական «Glos Polski» (Գլօս Պօլսկիի) քաղաքական, հասարակական և գրական շաբաթաթերթի հրատարակութիւնը։

«Գլօս Պօլսկիի» բոլոր ջանքերն ու աշխատանքները ուղղված են լինելու մի բանի՝ անկուսակցական, օբիէկտիվ կերպով լուսաբանելու ներկայ մոմենտը և միացնելու տարբեր կարծիքները։ Շաբաթաթերթը ձգտում է այն բանին, որպէսզի իւրաքանչիւր լեհ, անկախ նրա հեռաւորութիւնից և բնակավայրից, մի մտքով, մի զգացմունքով ու հասկացողութեամբ կարող լինի իր բարի կամքը արտայայտելու յօգուտ լեհ ժողովրդի։

«Գլօս Պօլսկին», ի միջի այլոց, բազմակողմանիօրէն քննելու է «Պատերազմից վնասվածներին օգնող լեհական ընկ.» նպատակները և աջակցելու է դրանց։ Ընկ. հիմնված է Պետրօգրադում, շաբաթաթերթի նախաձեռնութեամբ։ Թերթի աշխատակիցներն են լեհական մտքի աչքի ընկնող ներկայացուցիչները՝ գրականագէտները, հրապարակախօսներ, գիտնականներ, հասարակական և քաղաքական գործիչներ (Ժողովրդական կոմիտէի, Պետ. Դումայի և Խորհրդի անդամները և քաղաքական կուսակցութիւնների ներկայացուցիչներ)։

Շաբաթաթերթի խմբագիրն է յայտնի լեհ բանաստեղծ և գրականագէտ Ռեմիգիուշ Կվեատկովսկի, հրատարակիչն է երդ.-հաւ. Գ. Գ. Լևեստամ։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

ԿՈՉ

Ինչպէս պայծառ ու ճաճանչափայլ կենսատու արևին նախորդում է սև ու մութ խաւարը, ուր չարքերն են վխտում, այնպէս էլ Թիւրքահայերի վառ յոյսերով լի [illegible] ապագայից առաջ սոսկալի զուլումը, միանալով պատերազմի ահռելի բոցի լափող լեզուների հետ, իր չար, աւերիչ գործն է տեսնում։

Մեզ սահմանակից Թիւրքահայ գիւղերից, որ կրակի ու մոխրի կոյտեր են դառել, հազարաւոր հայ ընտանիքներ, Թողած իրանց տունն ու տեղը, կայքն ու գոյքը հարամու ձեռքին, հոգիները բերաններն առած փախչում են այդ զուլումի երկրից, երբեմն իրանց չէն ու քաղցր հայրենիքից, փախչում են մեզ մօտ ապաստան և մխիթարանք գտնելու։

Ինչպէս գուժում է թէ հայ և թէ օտար մամուլը, ներկայումս տասնեակ հազարներով ծերունիներ, վիրաւոր կանայք և ծծկեր մանուկներ լցվել են Կարսի, Սարիղամիշի և այլ սահմանակից մեր շրջանները։ Այժմ այդ խեղճ ու կրակ գաղթականներն անտուն և անտէր, մերկ ու տկար, քաղցած և ծարաւ իրանց սև օրը լաց են լինում բաց երկնքի տակ, սառը ձիւնի մէջ։ Չը կայ մէկը, որ նրանց լացն ու կոծը լսի. չը կայ մէկը, որ ծծկեր մանուկներին գթայ, չը կայ մէկը, որ նրանց վէրքերը բուժի...

Ահա այդ Թշուառականների սոսկալի դառը վիճակն է հարկադրում մեզ կոչ անելու ժողովրդին և հանգանակութեան դուրս գալու յօգուտ Թիւրքահայ գաղթականների։ Մենք հաւատացած ենք, որ այսպիսի ճգնաժամին չի գտնվի նոյնիսկ մէկը, որ իրան մարդ չը զգայ, որի սիրտը քարից էլ կարծր լինի, ձիւնից էլ սառը, որ զլանայ իր լուման տալու այս մարդասիրական վեհ նպատակի համար։

Ասում են՝ «Ողորմութիւնը արքայութեան դուռն է բացում»։ Ողորմեցէք և տուէք, ինչ որ կարող էք։ Իւրաքանչիւր մի նուէր՝ լինի նա դրամով թէ իրեղէն, խորին շնորհակալութեամբ կընդունենք, յուսալով որ որքան էլ նուէրը չնչին լինի, այնու ամենայնիւ մի խեղճի արցունք կը սրբի և դէմքին ժպիտ կը բերէ։

Թիւրքահայ գաղթականների խնամատար Գանձակի Մասնաժողով։

Ծանօթ.—Ցանկացողները իրանց կամաւոր նուէրները կարող են յանձնել Գէորգ Զաքարեանի խանութը ս. Յովհաննէս եկեղեցու դիմաց և կամ այդ նպատակով յատուկ շրջողներին։ Բոլոր տեսակի նուէրների համար պահանջել տպագրված և պատասխանատու կնիքով վաւերացրած անդորրագրեր։

Խմբագիր-հրատարակիչ՝
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

Печатать дозволено военной цензурой.

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բժշկ. Բ. Նաւասարդեանի
Հիմնված 1880 Թ.
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
«606»-ի և «914»-ի ներարկում բժշկական խորհրդակցութեամբ՝ առ. 11—12 ժ.
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վեներական (սիֆիլիս) հիւանդութիւն։
Բ. Գ. ԱՂԱՄԱԼԵԱՆ—9½—2 ժ. ներքին, ջղային և երեխայոց հիւանդութ. և ծաղկահատ.։
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—11—12 ժ. ականջի, կոկորդի քթի հիւանդութ.։
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. երիկ. հիւնդ. և շաքարախտ. երեխայոց ներքին և հիւ. և ծաղկահատ.։
ԿԻՆ-Բ.ԺԻՇԿ ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆ—12—1 ժ. մանկաբարձութիւն և կանանց հիւ.։
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—6—7 ժ.
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
1. 0—151

Ատամնաբուժարան
հիմնված ատամնաբույժ
Բ. ՀԱՅԿԻՆԱՑԻ
Նախաձեռնութեամբ։ Թիֆլիս, Միխայլօվսկի պր. № 7
Բուժարանը բաց է հիւանդների համար **օրվայ ու գիշերվայ ամեն ժամին**։ Ատամները բուժելու և պլոմբելու համար վճարը ստացվում է ըստ հաստատված սակագնի։
Բուժարանում գործում են 5 բժիշկ-մասնագէտներ, բժ. վիրաբոյժ Ր. Բ. Պիրադովը (որ ժամանակաւորապէս բացակայ է)։
Բուժարանն ունի կատարելագործված լաբօրատօրիա արհեստական ատամներ պատրաստելու համար։ Կատարվում են **ամեն տեսակ ատամնա-տեխնիկական աշխատանքներ** և շտապ վերանորոգումներ **3 ժամվայ ընթացքում**։
(օ. մ.) 755. 100—72

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Ա. ՀԱԽՎԵՐԴԵԱՆ
նախկին օրդինատոր Պետերբուրգի սիֆիլ.-վեներ. կլինիկայի։ Ընդունում է հիւանդներին յատկապէս միզասեռային, վեներ., սիֆիլիսային հիւանդութեան. առաւ. ժամը 10—11 և երեկ. ժ. 6—8. Սեմիօնովսկայա փող., № 18 (Վօրօնցօվի արձանի մօտ)։ Բժշկի բնակարանը Սեմեօնովսկայա, № 16.
(Հ. ու. կ.) 1018. 100—25

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ


Золотая медаль Лондонъ 1893 г.
!Остерегаться подделокъ!
Провизора
Г. Ф. Юргенсъ
Борно-тимоловое мыло
отъ пота, загара, веснушекъ. угрей, прыщей и желтыхъ пятенъ.
Благовонное туалетное мыло высшаго достоинства
Продается вездѣ
1/1 кус. 50 к. 1/2 кус. 30 к.
Главный складъ у Г. Ф. Юргенсъ, Москва.

(Կ.) (М. 4203) 23—2

Ծախվում են

1) «ՎԵՆԵՐԱԿԱՆ ԵՒ ԳԱՂՏՆԻ ՑԱՒԵՐԻ ԲԺՇԿԱՐԱՆ», նկարներով, բազմաթիւ խորհուրդներով և րեցեպտներով։ Անհրաժեշտ գիրք և պարզ ու հասկանալի գրված ամեն մի չափահասի համար. բազմաթիւ նախազգուշութեան կանոններ տրիպէրով և այլ ցաւերով չը վարակվելու համար։ Գրքի մէջ կայ նաև սուր և խրոնիկական տրիպէրի և բժշկութեան մասին, րեցեպտներով։ Գինը 50 կոպ.։
2) «ՓՈՐՁԱՆՔՆԵՐԻ ԱՌՋԵՒՈՆ ԲԺՇԿԱՐԱՆ», ամեն տեսակ պատահական փորձանքներ, հիւանդութիւններ։ Թունաւորութիւններ և նրանց շուտափոյթ օգնելը, Բազմաթիւ տնային դեղեր և խորհուրդներ։ Շատ պարզ ու հասկանալի լեզուով։ Ամեն մարդու անհրաժեշտ գիրք գրպանի համար, և ամեն մարդ կարող է մեծ օգնութիւն հասցնել թէ իրան և թէ ուրիշներին։ Գինը 30 կոպ.։
3) «ԾԻԾԱՂԻ ՏԿՃՈՐ» ամենալաւ և ծիծաղաշարժ անեկդոտների ու սրախօսութիւնների ժողովածու։ Ծիծաղաշարժ տկճորի պատկերը գրքի երեսին։ Գինը 20 կ.։
Այս երեք գրքերը միասին պահանջողներին

ՁՐԻ ՈՒՂԱՐԿՈՒՄ ԵՄ ԻԲՐ ՆՈՒԷՐ

երեք հետևեալ գրքերը. 1) «Անիկարմատի շալվարը» ծիծաղաշարժ վօդէվիլ չափահասների համար (գինն է 20 կ.), 2) «Րաֆֆի» պատկերով (գ. 10 կ.), 3) «Միանոյն դագաղում», պատմուածք հայ-Թիւրքական կռիւներից, գիւղերի նկարներով, գինն է 7.։
Գրքերի գինը և ճանապարհի ծախս 20 կոպ. անպայման առաջուց ղրկել մարկաներով։ Հասցէս՝ Тифлисъ. Семеновская ул. № 9. Медицинскому фельдшеру А. Г. Есаянцу.
(Հ.Կ.) 327. 100—70



Լոյս տեսաւ
ՆՈՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՐԳԱՐԱՆ
ԱՐՇԱԼՈՅՍԻ ՁԱՅՆԵՐ
Ժողովածու հայրենասիրական երգերի
(Խմբապետների և խմբերի պատկերներով)
ԳԻՆՆ Է 40 ԿՈՊ.
Դիմել Թիֆլիսի գրավաճառանոցները։ Պահեստը գտնվում է Эрев. площадь, магазинъ Арзуманяца.
(օ. մ.) 32. 5—4

„БОРАКСЪ“
Теперь я знаю и понимаю,
Скажете на препаратъ „Бораксъ“,
И бѣлье всегда имъ стираю,
Какъ испытаемъ его не разъ,
Что стирается легко, чисто и бѣлоснѣжно
И для кармана экономично
И на руки дѣйствуетъ совсѣмъ нѣжно.
Требуйте его! Будете стирать
и продавать отлично. фабр. преп.
Г. К. Давыдова, въ Авмавирѣ.
(Կ.) 1078. 10—6

ԱՌԵՒՏՐԻ ԵՒ ԱՐԴԻՒՆԱԲ. ՄԻՆԻՍՏՐ. ԻՐԱՒԱՍՈՒԹԵԱՆ ՆԵՐՔՈՅ ԳՏՆՎՈՂ
ԱՌԱՋԻՆ
ՀԱՇՒԱՊԱՀԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՔՆԵՐ
Ն. Ռ. ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ
Գոյութիւն ունի 1895 թ.
Հեղինակ առևտրական հաշուապահութեան ձեռնարկի և զանազան մասնագիտական ձեռնարկների։
Տալիս է երկու սեռի անձանց մասնագիտական առևտրական գիտութիւն 4-ԱՄՍԵԱՅ ԴԱՍԸՆԹԱՑՔՈՎ ամենօրեայ պարապմունքներով։
Դասընթացքներում աւանդվում են. **պարտադիր**—Հաշուապահութիւն կրկնակի իտալ., պարզ, գերմ., ֆրանս., ամերիկ. և ուրիշ սիստեմ. արդիւնաբերութեան զան. ճիւղերի, նաև գործար. և նաւթարդիւն., առևտր. Թւաբ., առևտր. Թղթակց., քաղաքատնտ., առևտր. իրաւունք., մուրհակի կանոնադր., առևտր. Թւաբ. համրիչի վրա և վայելչագր. (ամենավատ ձեռքի ուղղումն). **ոչ պարտադիր**—Օտար լեզուներ, սղագրութիւն և ռեմինգտոն։
Նիւթերը մասնավոր և գործնական պարապմունքների համար առնվում են բէալ կեանքից, ինչպէս որ պաշտօնում գտնված դէպքում։
Ուսուցիչները բարձր կրթութիւն ստացած մասնագէտներ են, որոնք գործնականապէս և տեսականապէս պատրաստված են ամեն մի առարկայի համար առանձին։
Ատեստատներ տրվում են մինիստրութեան Թոյլտւութեամբ։
Պարապմունքների սկիզբը ՅՈՒՆՎԱՐԻ 15-ԻՑ 1915 Թ.։
Խնդրագիրների ընդունելութիւնը դեկտեմբերի 15-ից, առաւօտեան ժամը 9—11-ը, երեկ. 5—7-ը։
Ծրագիրը և կանոնները տրվում և ուղարկվում են ձրիաբար։
Դասընթացքներին կից հաստատված են քիչ պատրաստված անձանց համար առանձին պատրաստական և լրացուցիչ դասարաններ ռուսաց լեզուի և Թւաբանութեան համար։
Անձամբ և նամակներով դիմել՝ Тифлисъ, Учредит. Бухг. Курсовъ Н. В. Абраамяну. Николаевская, 22, Телефонъ 7—44.
(Ն.Հ.Կ.) 1056.. 0—16

Գայիանեան Օրիորդաց Դպրոցի Հոգաբարձութիւն
Մողնու ս. Գէորգ եկեղեցու ծխականներին հրաւիրում է ծխական ժողովի ամսիս 25-
(կիրակի) ժամը 12-ին։
Օրակարգն է՝ ա) քննութիւն անցեալ ուսումնական տարվայ հաշւի և բ) 1914/1
ուս. տար. նախահաշւի։
Ժողովը, լինելով երկրորդը, կայանալու է անկախ ծխականների Թւից։
(Հ.Կ.) 44. 2—2 Հոգաբարձութիւն

Առևտրի և Արդիւնաբերութեան Մինիստր. տնօրէնութեան ներքոյ գտնվող
Տ. Մ. ՓԻԼՕՍԵԱՆԻ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ
ԿՈՒՐՍԵՐՈՒՄ
Թիֆլիս, Միխայլեան պր. 24. Տելեֆօն № 976.
Տալիս են երկսեռ անձերին մասնագիտական առևտրական կրթութիւն։
Դասընթացքն աւարտողներին տրվում են ատտեստատներ։
Գործնական պարապմունքները կատարվում են կուրսերում՝ Լօնդօնի Pitman և Պարիզի Pigier դպրոցների ձևով կազմակերպված Muster-Comptoir-ում։ Նիւթերն առնվում են բէալ կեանքից։ Առարկաներն են. ա) պարտադիր. 1) Հաշուապահութիւն (պարզ, իտալ., գերմ., ֆրանս., ամերիկեան, բանկային և գործարանական). 2) Առևտրական Թւաբանութիւն. 3) Քաղաքատնտեսութիւն. 4) Օրէնսգիտութիւն (առևտրական իրաւունք, մուրհակի կանօնադրութիւն). 5) Առևտրական Թղթակցութիւն. 6) Թւաբանութիւն համրիչի վրա. 7) Վայելչագրութիւն (ամենավատ ձեռքի ուղղումն), արագագրութիւն. բ) ոչ-պարտադիր. 1) **Օտար լեզուներ**. 2) Սղագրութիւն. 3) Դակտիլօգրաֆիա (ռեմինգտօն և այլ.) և 4) Առևտր. Թղթակցութիւն օտար լեզուներով։ Պարապմունքները կատարվում են և զատ-զատ։ Ունկնդիրների Թիւ շատութեան պատճառով բացվում է երկրորդ զուգընթաց բաժանմունք, որը մանաւանդ յարմար է օտարաքաղաքացիների համար։ Ունկնդիրների Թիւը սահմանափակված է։ Պարապմունքների սկիզբը յունվարի 15-ին։ Խնդիրների ընդունելութիւնը առ. ժամը 11—12-ը և երեկ. 4—6-ը։ Ծրագիրը և կանոններն ուղարկվում և տրվում են ձրիաբար կուրսերի շէնքում։ Կուրսերը ֆիրմաներին յանձնարարում են հաշուապահներ, օգնականներ և առևտր. այլ ծառայողներ՝ կուրսերի ընթացաւարտներից և իրանց ընդունակութեամբ աչքի ընկնողներից։ (Ընթացիկ տարում կուրսերն ունեցել են 334 ունկնդիր, որոնցից 67 հոգի իգական սեռից)։
Կուրսերի հիմնադիր՝ Տ. ՓԻԼՕՍԵԱՆ
(ա.օ.) 1046. 0—38

ՆՈՐ ՄԻՋՈՑ
Որպէս անվնաս, կատարելագործված և ամենալաւ միջոց նոր և հին հօնօրրէի (տրիպպերի) դէմ, առաջարկ
ենք կապսուլներ «Ա» Յակոբեանի, (капсюли «А» Акопяна), որը Թոյլատրված է գլխաւոր բժշկական խ
հրդից № 765։
Բոլորովին բժշկվելու համար հարկաւոր են 4 արկղ, իսկ քրօնիկական (հնացած) հիւանդներին—վեց ա
Գինն է՝ մէկ արկղի 2 ր. 50 կ. (60 հատ) } կարելի է ստանալ պօստով
» ½ արկղի 1 ր. 50 կ. (30 հատ) } վերադիր վճարով։
Ծախվում է բոլոր մեծ և յայտնի դեղատներում և դեղատան պահեստներում։ Գործադրելու ձեռնարկ
կցվում է արկղիկին։ Գլխաւոր պահեստն է ամբողջ Ռուսաստանի համար. Москва, Срѣтенка, Просвирин
домъ 7. Հասցէն նամակների համար՝ Москва, почт. ящ. № 486, Акопяну. Հեռագիրների համար՝ Моск
Акопяносъ. (Կ.) 1096. 12—5

ՏԵԽՆԻՔԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ
ԻՆԺԵՆԵՐ
Տ. Ա. ԲՈՒԴԱՂԵԱՆԻ
Բագու, Կրասնովօդսկայա փ. տ. Աւան-Իզբաշեանցի։ Հեռախօս №№ 23-49, 23-50
Առաջարկում է ամբողջ Կովկասի և Պարսկաստանի համար իսկապէս ԴԻԶԵԼ շարժիչներ (մօտօրներ) յայտնի ԿՕԼՕՄԵՆՍԿԻ ընկ. մեքենայագործարանից։
Հօրիզօնական անգլիական շարժիչներ, (մօտօրներ) «ԿՐՕՍԼԷՑ» ընկերութեան մեքենայագործարանից «Դիւրացրած Դիզել» սիստեմի, որ գործ է ածվում նաւթի բոլոր տեսակներով. նաւթի ծախսն է մի ժամում ամեն մի ուժին ½ ֆունտ կամ 200 գրամ։
Գազային շարժիչներ, որոնք բանում են Թէ բնական և Թէ գեներատորային գազով։
Ջրհան և ջրմուղ մեքենաներ (նասօսներ)։
Ջրի շարժիչներ (տուրբինաներ)։
Սառոյց պատրաստող մեքենաներ «Ֆէնիքս» ընկ. գործարանից։
Ամեն տեսակ էլեքտրական մեքենաներ և պիտոյքներ յայտնի «Դինամօ» ընկ. գործարանից։
Երկրագործական մեքենաներ՝ լօկօմօբիլներ, ցորեն մաքրող մեքենաներ, տրակտօրներ և այլն՝ յայտնի ամենայն ամերիկական «ԿԷՅՍ» (Case) ընկեր. գործարանից։
Մեծ ճանապարհի վրա աշխատելու համար ԱՒՏՕՄՕԲԻԼՆԵՐ նոյն ամերիկական «ԿԷՅՍ» (Case) ընկերութեան գործարանից։
Վերոյիշեալ տեխնիքական գրասենեակը իր վրա է վերցնում զանազան գործարաններ սարքել և գործի գցել իր միջոցներով՝ ինժեներներով և վարպետներով։
Դիմել՝ Баку, Техническая Контора Т. А. БУДАГЯНЦЪ.
Արտասահմանից՝ Bacou (Russie) Bureau Technique T. A. Boudaguian, Ingénieur.
(Հ.Կ.) 551. 0—67

Типографія Канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный.